

5(543)

18.02.2019

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՀՈՎԻՄԱՆՅԱՆ

## ՔԱՌՅԱԿՆԵՐ



Վերջացավ...

Կյանքս մաշվեց, վերջացավ.  
Ինչ հույս արի՛ փուչ էլավ,  
Ինչ խնդություն՝ վերջը ցա՛վ:

\*\*\*

Ա՛նց կացա՛ն...

Օրերս թռան, անց կացա՛ն.  
Ախ ու վախով, դարդերով  
Սիրտըս կերա՛ն, անց կացա՛ն:

\*\*\*

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,  
Լիքն ակունքով հագարավոր.  
Իմ զայրույթը լիքն է սիրով,  
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

\*\*\*

Հին աշխարհը ամեն օր  
Հագար մարդ է մտնում նոր,  
Հագար տարվան փորձն ու գործ  
Ըսկսում է ամեն օր:

\*\*\*

Քանի՛ ձեռքից են վառվել,  
Վառվել ու հուր են դառել,  
Հուր են դառել՝ լույս տվել,  
Հույս տալով են սպառվել:

\*\*\*

Մընացել է բերրը մեզ,  
Հաղթանակի երթը մեզ.  
Անց են կացել՝ ով կային,  
Հիմի կզա հերթը մեզ:

\*\*\*

Հոգիս՝ տանը հաստատվել -  
Տիեզերքն է ողջ պատել.  
Տիեզերքի տերն են ես,  
Ո՛վ է արդյոք նկատել:

\*\*\*

Ո՛նց է ժպտում իմ հոգին  
Չարին, բարուն,- ամենքին.  
Լույս է տալիս ողջ կյանքին  
Ու էն ճամփին անմեկին:

\*\*\*

Լիներ հեռու մի անկյուն,  
Լիներ մանկան արդար քուն,  
Երագի մեջ երջանիկ,  
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

\*\*\*

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
Հագար դարում հագիվ դառավ Մարդասպան.  
Չեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,  
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

\*\*\*

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,  
Հեքիաթական պալատներում ըսպասում են  
իմ հոգուն.  
Ի՛նչ են շինում ես ցեխերում, աղմուկի մեջ  
վայրենի...

Ա՛խ, թե՛ նորից գտնեն ճամփան, դեպի էնտե՛ղ,  
դեպի տուն...

\*\*\*

Հէ՛յ ագահ մարդ, հէ՛յ անհոգ մարդ, միտքդ  
երկար, կյանքըդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան թեզ պես, թեզնից  
առաջ, քո առաջ.

Ի՛նչ են տարել նըրանք կյանքից, թե՛ ինչ տա-  
նես դու թեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան  
ես ճամփեդ:

\*\*\*

Քուն թե արթուն՝ օրիս շատը երագ եղավ,  
անցկացավ,  
Երագն էլ, նուրբ ու խուսափուն, վըռագ եղավ,  
անցկացավ.

Վըռագ անցան երագ, մուրագ, ու չհասա ոչ  
մեկին,

Կյանքըս թեթև տանուլ տված գըրագ եղավ,  
անցկացավ:

\*\*\*

Ո՛ր աշխարհում ունեն շատ բան, միտք են  
անում՝ է՛ս, թե է՛ն.

Մեջտեղ կանգնած միտք են անում, չեն իմա-  
նում՝ է՛ս, թե է՛ն.

Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկա-  
նում ինչ անի.

Տանի՛, թողնի՛,- ո՛րն է բարին, ո՛ր սահմա-  
նում է՛ս, թե է՛ն:

\*\*\*

Ես շընչում են միշտ կենդանի Աստուծո՛ւ շունչը  
ամենուր.

Ես լըսում են Նրա անլուռ կանչն ու շունչը  
ամենուր.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հո-  
գին

Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունչը ամե-  
նուր:

\*\*\*

Ամեն անգամ քո տվածից երբ մի բան ես դու  
տանում,

Ամեն անգամ, երբ նայում են, թե ինչքա՛ն է  
դեռ մնում,-

Ջարմանում են, թե՛ ո՛վ շոայլ, ինչքա՛ն շատ  
ես տվել ինձ,

Ինչքա՛ն շատ են դեռ թեզ տալու, որ միա-  
նանք մենք նորից:

\*\*\*

Հագար տարով, հագար դարով առաջ թե՛ ետ,  
ի՛նչ կա որ.

Ես եղել են, կա՛մ, կլինեն հար ու հավետ, ի՛նչ  
կա որ,

Հագար եսպես ձեռք փոխեն, ձևը խաղ է ան-  
ցավոր,

Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ,  
ի՛նչ կա որ:

\*\*\*

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան  
ամենքի.

Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ  
առանց արդյունքի:

Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուս-  
նավ ես հողին...

Ի՛նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծա-  
ղիկ տվողին...

\*\*\*

Հե՛յ ճամփաներ, ճամփաներ.

Անդարձ ու ինձ ճամփաներ,

Ովքե՛ր անցան ձեզանով,

Ո՛ր գնացին ճամփաներ:

\*\*\*

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ  
հոգին.

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է  
իմ հոգին.

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռա-  
վոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է  
իմ հոգին:

\*\*\*

- Ես է, որ կա... Ճիշտ ես ասում. թասդ բեր:

Ես էլ կանցնի՛ հանց երագուն, թասդ բեր:

Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն,

Մեկն ապրում է, մյուսն սպասում. թասդ բեր:

## ԲԱՐԻ ԵՐԹ, «ԳԻՏԱԿԱՆ ԱՐՃԱՆՍ»

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միություն» (ԱԵԳՄՍ) հասարակական կազմակերպությունը Երևանի պետական համալսարանի հետ համատեղ նախաձեռնել է «Գիտական Արցախ» պարբերականի հրատարակությունը: Նշենք, որ կազմակերպությունը չորս տարի է, ինչ գործում է և իրականացրել է շուրջ երկու տասնյակ ծրագրեր, մասնավորապես՝ երիտասարդների իրավագիտակցության և ձեռնարկատիրությանը զբաղվելու հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացներ, 6 գրքերի ու ֆիլմերի շնորհանդեսներ, «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական առաջին օլիմպիադա, գիտական ընթերցումներ, «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի գործարկում: Կազմակերպության հաջողված ծրագրերից է միջազգային երիտասարդական գիտաժողովների կազմակերպումը, որոնց մասնակցել են 250 գիտնականներ ու մասնագետներ, իսկ արդյունքներն ամփոփվել են գիտաժողովների ժողովածուներում: Կազմակերպությունն ունի 38 անդամ Արցախից, Հայաստանից, ՌԴ-ից, որոնցից մեկը գիտությունների դոկտոր է, 18-ը՝ թեկնածու, 18-ը՝ ասպիրանտ և հայցորդ: Այսօր արդեն իրողություն է նրա մեկ այլ հաջողված ձեռնարկում՝ գիտական պարբերականը, որի նախաձեռնման մասին հայտարարվել էր հինգ ամիս առաջ միջազգային գիտաժողովի ամբիոնից:

գրող-հրապարակախոս Ջորի Բալայանը, գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Շնորհանդեսի մասնակիցներին ողջունեց ԱԵԳՄՍ հիմնադիր և նրա նախագահ, «Գիտական Արցախ» հանդեսի խմբագիր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյանը: Նա ասաց, որ հանդեսը լիովին տեղավորվում է ԱԵԳՄՍ առաքելության շրջանակում, այն է՝ կարողանալ գիտության միջոցով Արցախը ճանաչելի դարձնել օտարերկրացիներին: Հանդեսի լույսընծայումը նպատակ է հետապնդում, որ արտերկրի

թյան հետ, որն ունի պետականության բոլոր հատկանիշները, և որտեղ մարդիկ արարում են ու զբաղվում գիտությամբ»,- ասաց նա: Հանդեսի շապիկի վրա պատկերված Արցախի նոր քարտեզն ու խորհրդանիշներն այդ են վկայում:

«Գիտական Արցախ» հանդեսի բովանդակության և կառուցվածքի մասին տեղեկություններ տվեց ԱրԴԳ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԱԵԳՄՍ անդամ Շուշան Խաչատրյանը: Պարբերականի ամենակարևոր ձեռքբերումն այն է, որ ներգրավվել է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի՝ ԲՈԿ-ի կողմից հաստատված ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում: Խմբագրական խորհրդում ընդգրկված են Արցախից, Հայաստանից և արտերկրից հեղինակավոր գիտնականներ: Անդամիկ համարը մկիրված է Հայաստանի առաջին հանրապետության 100, Արցախյան շարժման 30 և Երեւոնի-Երևանի հիմնադրման 2800-ամյակներին: Հանդեսում տեղ են գտել հայկական արդի հիմնախնդիրներից մեկի՝ պետականության վերաբերյալ Հայաստանը, Արցախը, ԱՄՆ-ն, Գերմանիան, Լեհաստանը և Բելառուսը ներկայացնող գիտնականների աշխատանքները: Պարբերականում գտնված են նաև ԱԵԳՄՍ և ԵԴԳ կողմից

թյունը, համագործակցելով բուհի հետ, հիմնադրում է գիտական պարբերական, և այն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի ընդունելի հանդեսների ցանկում:

Գիտական հանդեսի լույսընծայման կապակցությամբ շնորհավորանքի և օրհնանքի խոսք ասաց ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ մտախոհելով, որ արցախցու գիտական միտքը միշտ փայլատակի մեր երկնակամարում, մի բան, որ միշտ եղել է նախորդ ժամանակաշրջաններում, և այսօր էլ նրա վերհանումն ավելի քան սպասված ու պահանջված է, քանի որ առանց գիտության առաջնադասում չկա ոչ մի տեղ: Սրբազանն ասաց, որ այսօր Արցախի քաղաքական, հոգևոր, ազգային անվտանգության կռիվների շարքում կարևոր է գիտության դերը, որի համար անհրաժեշտ է դպրոցում բարձրացնել հիմնարար առարկաների դասավանդման մակարդակը, քանի որ առանց դրա անհնար է գիտությունն առաջ տանել: Նա ընդգծեց ԿԳՄ նախարարի այսօր ձեռնարկած քայլերն այդ ուղղությամբ, ինչպես նաև ԱԵԳՄՍ-ի դերը գիտնականների միավորման գործում:

ԱՀ ԿԳՄ նախարար Ն. Աղաբալյանը նույնպես շնորհավորեց գիտական հանդեսի լույսընծայումը՝ մտախոհելով, որ նրանում գտնված հոգևածների գիտականությունը որևէ մեկի մոտ թերահավատություն չառաջացնի: Նախարարն անդրադարձավ գիտության ոլորտում կարևոր խնդիրներին, տեղեկացրեց, որ այսօր ՀՀ-ում լուրջ փոփոխություններ են սկսվել գիտության ոլորտում: Նա այն համոզմանն է, որ գիտության ոլորտը ենթակա է արմատական, խորքային բարեփոխումների: Եվ այս առումով կարևորեց սերնդափոխությունը ոլորտում, բայց և ընդգծեց, որ գիտությունն այն ոլորտն է, որտեղ շատ խրախուսելի է երիտասարդների ակտիվությունը, ու նաև շատ կարևոր է այն մարդկանց դերակատարությունը, որոնք ճանապարհ են անցել:



գիտնականները ծանոթանան Արցախին, ստանան նրա վերաբերյալ օբյեկտիվ տեղեկություններ և համալրեն այն պարբերականների շարքը, որոնք իրենց համեստ ներդրումը կարող են ունենալ Արցախի ճանաչման գործում: «Նման հանդեսները կարող են դառնալ չկրակող, բայց ազդեցության մեծ շրջանակ ունեցող զենք, որով մենք կկարողանանք այնպես անել, որ Արցախն օտարերկրացիների մոտ ոչ թե ասոցացվի հակամարտության, այլ մի պետու-

2018թ. սեպտեմբերի 13-16-ը Ստեփանակերտում անցկացված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի 67 հոդվածներ, որոնց հեղինակներից 9-ը գիտությունների դոկտոր է, 32-ը՝ թեկնածու, 19-ը՝ ասպիրանտ ու հայցորդ, 7-ը՝ փորձագետներ ու մագիստրոսներ: Բանախոսը հատկանշեց, որ Արցախի իրականության մեջ սա առաջին դեպքն է, երբ հասարակական կազմակերպու-

ԸՆԹԱՔ

ՇԵՏԱՔՐՔՐԱՆԱՐԺ ՖԻԶԻԿԱՆ ԴՊՐՈՅՈՒՄ

Հանրակրթական դպրոցներում աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը նախաձեռնել է համանուն ծրագիր: Տարվա սկզբից 9-րդ դասարանների աշակերտների համար այցելություններ են կազմակերպվել դեպի Շուշի՝ «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարան, հունամիտար քոլեջ, Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան՝ այդ հաստատությունների ծրագրերին ու հնարավորություններին նրանց ծանոթացնելու նպատակով: Ինչպես տեղեկացրեց նախարարության ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և արտադպրոցական բաժնի վարիչ Ստեփան Օհանջանյանը, այցելություններն արդեն ավարտել են Ասկերանի, Մարտունու շրջանների դպրոցականները, սկսվել է մարտակերտցիների ծանոթությունը հիշյալ ուսումնական հաստատությունների հետ: Մինչև մայիսի կեսերը հանրապետության բոլոր իններորդիցները՝ շուրջ 2000 հոգի, կմասնակցեն մասնագիտական ճանաչողական այդ միջոցառմանը:

Ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում, Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարվաճառ համայնքներում հանդիպումներ ունեցան, աշակերտներին տվեցին տեսական և գործնական գիտելիքներ ֆիզիկայից, կենսաբանությունից:



Պարզագույն գործիքներով երիտասարդ ֆիզիկոսները ցուցադրեցին հետաքրքրաշարժ փորձեր, որոնց կատարմանը մասնակցեցին նաև աշակերտները: Փորձերը, որոնք հրաշագործություն էին թվում, շարժեցին նաև նախարարության աշխատակիցների հետաքրքրությունը, ինչն էլ առիթ հանդիսացավ փորձերին մասնակցելու նրանց ինքնաբերական ցանկությամբ:


Ինչո՞ւ է պոլիէթիլենե խողովակով մազնիսն ազատ անկման արագությամբ ընկնում, իսկ պղնձյա խողովակի միջով դժվարությամբ իջնում, այն դեպքում, երբ մազնիսը չի կպչում պղնձին: Կամ ինչո՞ւ բարակ թղթով ծածկված ջրով լիքը բաժակը շուռ տալու դեպքում նրա մեջ եղած ջուրը չի թափվում օդում պահած վիճակում: Ինչո՞ւ է ծիածանի յոթ գույների խառնուրդից առաջանում սպիտակ գույն: Ինչպե՞ս կարելի է տնային պայմաններում կիրառելի կամ կարտոֆիլից ստանալ էլեկտրական հոսանք: Կարո՞ղ է ջուրը միաժամանակ լինել ագրեգատային երկու՝ պինդ և հեղուկ վիճակում և այլ «ինչու»-ներ: Այս ամենը կատարվեց ներկաների աչքի առաջ. դա աճաբարություն էր և ոչ էլ՝ հրաշք: Ֆիզիկան է, որ տալիս է այս ամենի գիտական բացատրությունը: Եվ ընդհանրապես, բնության մեջ կատարվող ամեն բան ունի իր բացատրությունը: Իսկ որպեսզի հասկանաս, պետք է հետաքրքրություն ցուցաբերես:

Դրա համար նախ պետք է զարմանալ: Գիտության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու հենց այս հանրահայտ սկզբունքով են առաջնորդվում երիտասարդ ֆիզիկոսները, որոնց նպատակն է Հայաստանում և Արցախում տարածել ու հանրայնացնել գիտությունը, մասնավորապես՝ ֆիզիկան:

Ս. ԽԱՅԱՏՐՅԱՆ

ԲԱՐԻ ԵՐԹ, «ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ»

1 Նախարարությունն այսօր աշխատանքներ է տանում՝ խրախուսելու երիտասարդ գիտնականների ակտիվությունը և ներգրավելու արտերկրի մեր գիտնականների ներուժը: «Գիտությունն այն ուրտն է, որտեղ որակը չի կարող լինել տեղական նշանակության: Մենք պետք է առաջնորդվենք միջազգային չափորոշիչներով, և այն, ինչ ստեղծվում է ու պետք է ստեղծվի Արցախում որպես գիտական արդյունք, համարելի լինի համաշխարհային գիտության հետ, ինչն էլ հնարավորություն է միջազգային ինտեգր-



ման», - ասաց նա՝ հավելելով, որ մեր գիտական ներուժը դեռևս լիարժեք չիրազմած-չօգտագործված ուժ է: Քանի որ գիտության հիմքը դրվում է հանրակրթական դպրոցում, նախարարը կարևորեց դպրոց-բուհ կապը և այդ առումով իրականացվող բարեփոխումները:

Ելույթ ունենալով՝ գրող-հրապարակախոս Ջորի Բալայանն ասաց, որ ինքը հպարտ է և շատ ուրախ «Գիտական Արցախ»-ի համար: Մյուս ելույթ ունեցողները՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դոնաթա Գաբրիելյանը, Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը, ԵՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ջինաիդա Բալայանը, բարի երթ մարտիկ «Գիտական Արցախ»-ին, նաև իրենց առաջարկություններն արեցին:

Շնորհանդեսի մասնակիցները հեռացան այն տպավորությամբ, որ հանդեսի հողմածագիտներն իրոք կդառնան Արցախի գիտության դեսպաններ՝ տարբեր հարթակներում ներկայացնելով Արցախի իրավունքներն ու շահերը:

Սեփ. լրատվություն

ԸՆԴՈՐԻՆԱԿԱՆ ՎԱՋՈՂՎԱՅ ԴԱՍ

Յուրաքանչյուր մեզ հայտնի 150-ամյակի առթիվ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի VIII «Դ» դասարանում «Հայ գրականություն» առարկայից անցկացվեց քաղաքային բաց դաս Նարինե Գաբրիելյանի մոտ, որին ներկա էին դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը, քաղաքային մեթոդիավորման նախագահ Ա. Վանյանը, 6-րդ դպրոցի տնօրեն Ա. Ավետիսյանը, 1-12-րդ, ֆիզմաթ դպրոցների և ռազմամարզական վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչները:

Լուովա ծորերում... Այն վստահությունը և հանգստությունը, որով ուսուցչուհին սկսեց դասը, իր խոր արմատներն ունի. առարկային հիմնալի տիրապետող միայն կարող է այդպես իրեն զգալ դասարանում:

Տպավորիչ էր դասի մուտքը. ներկաներին



ուսուցչուհին, այլև VIII «Դ» դասարանի բազմաշնորհ աշակերտներն ունեին հանդարտ, գրագետ և գեղեցիկ խոսք: Անչափ տպավորիչ էր թմկա տիրուհուն ներկայացնող աղջկա դերակատարումը: Դասարանի տղաները հեղինակի խոսքերով գովերգում էին կնոջ ընդհանրական կերպարը, որից հայտնի էր այլևս չէր «հալվում»: Իսկ շնորհալի աշակերտուհի Միլա Պոլուխանյանի «Ամենա Լուռեցին» երգի ամբերի կատարումը պարզապես հիացրել ու կախարհել էր բոլորին: Բարձր էր նաև աշակերտների գիտակցական մակարդակը, ինչի արդյունքում կազմակերպված անցկացվեց խմբային աշխատանք: Աշակերտները տարբերակեցին պատկերավորման միջոցները: Ուսուցչուհու հարցերին պատասխանում էին ճիշտ և բովանդակալից: Մեծ տպավորություն թողեց նաև տեսասահիկ-խաչքառը, որի՝ պատմությանը վերաբերող հարցերի պատասխանների արդյունքում բացվեց «Թմկաբերդի առումը» վերնագիրը:

Դասն արդիականացվեց. թմկա անհաղթ հերոսին համեմատում էին մերօրյա հերոսների հետ: Պոեմում արծարծված գաղափարը բոլոր ժամանակների համար է:

Ուսուցչուհու կախարհական փայտիկը գրականության՝ արվեստի այդ տեսակի նկատմամբ աշակերտների մոտ արթնացնում է սեր, հոգևոր արժեքներն արժևորելու կարո-

մեծ բավականություն պատճառեցին ուսուցչուհու ասմունքը, թունամայանի «Ամենայն հայոց բանաստեղծ» շրջատույթ-թագով թագադրելու պատկերը: Ոչ միայն փորձառու ու-

ղություն: Այդ ամենը Նարինե Գաբրիելյանին հաջողվում է առարկային տիրապետելու և դասի ընթացքում ուղղորդողի դերում հանդես գալու շնորհիվ:

Ճոխ էր նաև դասի ավարտը՝ տեսադիտում «Ամաստ» օպերայից:

Ներկաները գոհ էին և հեռացան գեղագիտական հաճույք ստացած: Ակնհայտ է, որ գրականությունը ուսուցչուհու համար յուրատիպ աշխարհ է, որը հետաքրքիր է և ոգևորող:

Դպրոցի տնօրենի հավաստմամբ՝ Նարինե Գաբրիելյանի բոլոր դասերն էլ հրաշալի են՝ հագեցած արդիական միջոցներով: Մանկավարժի ընտանիքում մեծացած, կոչումով մանկավարժը գեղագիտական դաստիարակությանը միշտ մեծ տեղ հատկացնելով կարողանում է սիրել տալ գրականությունը՝ այն կապելով արվեստի բոլոր ճյուղերի հետ:

Աշակերտների մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցչուհուն և զինվորի մորը մարտնչեց անսպառ եռանդ, անմար ժպիտներ, արևաշատություն ու հաջողություններ անծնական կյանքում և աշխատանքում:

Անուշ ԲԱԲԱՅԱՆ  
Ք. Իվանյանի անվան  
ՈՍԿ հայոց լեզվի և գրականության  
դասախոս

ԳՐՔԵՐԻ ԱՃԽԱՐԸ

ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ԶԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Վիթխարի է գրականության դերը մարդու հոգևոր-բարոյական դաստիարակության գործում: Գեղարվեստական երկը՝ որպես խոսքի արվեստի արտահայտություն, ունի խոսքային, պատկերային այնպիսի ենթաշերտեր, որոնք տարիքային տարբեր փուլերում ստիպում են ընթերցողին նոր մոտեցում հանդես բերել նրա մեկնաբանությանը՝ վերանայելով նախորդ մոտեցումները: Գրականությունը դաստիարակում է սովորողների զգացմունքային ու մտավոր աշխարհը, պատմական զարգացման բոլոր ժամանակների մեջ ճանաչելի է դարձնում կյանքը և մարդուն: Բազմադարյան հայ և համաշխարհային գրականությունն իր զտված հարստությամբ 21-րդ դարում ապրողներին կարող է և պիտի տա գրական երկն ընկալելու ճաշակ, ապրելու հմտություն և իմաստություն, դաստիարակի ազգային և համամարդկային գրականության բարձր արժեքներով, ձևավորի ազգային նկարագիր: Զենց դա է գրականության դերն ու նպատակը՝ ներկայացնել աշխարհը, կյանքը, մարդկային հարաբերություններն այնպես, որ դրանք պատկերվեն իրենց ողջ երանգներով, երևան բոլոր կողմերից՝ դրանով իսկ ընթերցողի համար դառնալով բացահայտումներ և ուղեցույցներ: Գիրք կարդալը եղել ու շարունակում է մնալ մարդու ինքնազարգացման գլխավոր գործոններից մեկը: Լավ գիրքն ընթերցողին հնարավորություն է տալիս ապրել ամենալավ զգացողություններ, օգնում է աշխարհին նայել ավելի խորը ու սթափ հայացքով և հասկանալ, թե ինչն է իսկապես կարևոր և ճիշտ: Գրականության առարկայի ուսուցումը չի սահմանափակվում դասագրքերի պարունակությամբ: Ուսուցիչն իրավունք և հնարավորություն ունի իր հայեցողությամբ լրացնել դասավանդվող հեղինակի հետ կապված լրացուցիչ կենսագրական ու գեղարվեստական նյութերը, բայց այս պարագայում բոլորիս հուզում է մեկ այլ կարևոր հարց՝ ի՞նչ անել, որ աշակերտները կարդան: Ընթերցանության խրախուսումը սահմաններ չի ճանաչում, և ինչպես ցանկացած գործում, այստեղ ևս նորարարական բազմաթիվ եղանակներ ու հնարներ կան: Կամի պարզ ճշմարտություն ևս, որն անփոփոխ է: Ցանկացած գործ «դատապարտված» է հաջողության, եթե սովորողը դրանից հաճույք է ստանում՝ ցուցաբերելով իր նախաձեռնությունը: Ընթերցանության ուսուցման միջոցներից մեկը սովորողին ազատություն և ընտրության հնարավորություն տալն է՝ գրքի ընտրությունը թողնելով նրան: Բայց սովորողին ինչպե՞ս ծանոթացնել և հասու դարձնել գրքի անծայրածիր պաշարներին և ինչպե՞ս նրա մեջ այդ գրքերը կարդալու հետաքրքրություն ու ցանկություն առաջացնել: Ընթերցանության ուսուցման խրախուսիչ մեթոդներից են գրքի քննարկումները, որոնք ժամանակ առ ժամանակ պետք է կազմակերպի ուսուցիչը: Երեխաներն իրենց սիրելի գրքի մասին նախապես պատրաստում են նյութեր, պատմում, թե ինչ են սովորել գրքից: Նման դեպքերում սովորաբար ծավալվում է ակտիվ քննարկում. սովորողները լրացնում են իրար, հարցեր տալիս, բանավիճում, ստուգում միմյանց: Նման քննարկումներն արդյունավետ են, որովհետև հետո ընկերները, լսելով այս կամ այն գրքի մասին, ուզում են կարդալ: «Ընթերցանությունը հարստացնում է ինձ: Ես ստանում եմ ավելի շատ գիտելիքներ, դառնում ավելի ինքնավստահ և ավելի լավ եմ հասկանում շրջապատող մարդկանց», «Գրքերը սովորեցնում են երբեք չհանձնվել, պատրաստ լինել հաղթահարելու հանդիպած դժվարությունները», «Գրքերն ուժ ու իմաստություն են սովորեցնում». սովորաբար այս կարծիքներն են հայտնում ընթերցողները որպես եզրահանգում:

Շատ հաճախ ուսումնական տարվա ընթացքում աշակերտը ուսումնական թեմաների (երբեմն՝ դժվարամարս) յուրացման պատճառով լրացնելու: Ընթերցասերներին հուզող առաջին հարցն է՝ ի՞նչ գիրք կարդալ: Պարզ է, որ բոլոր գրքերը կարդալու համար մի ամբողջ կյանք անգամ չի հերիքի: Այդ պատճառով էլ ուսուցչի դերակատարությունն այստեղ անփոխարինելի է. շատ կարևոր է տարիքային տարբեր խմբերի համար գրքերի ճիշտ ընտրությունը: Որպես օգնություն գրականության ուսուցիչներին կազմել են լրացուցիչ գրականության ցանկ՝ ամառային արձակուրդներին աշակերտներին հանձնարարելու համար: Երաշխավորվում է այն ընդունել որպես ուղեցույց և ցանկության ու նպատակահարմարության դեպքում լրացնել ըստ ուսուցչի և աշակերտների նախասիրությունների: Կարելի է անգամ խորհուրդ տալ աշակերտ-ընթերցողներին՝ հատուկ տեսքով գրառումներ անել կարդացած գրքի դուր եկած հատվածներից՝ հետագայում ընկերներին պատմելու կամ քննարկելու նպատակով: Ուսուցիչները պետք է հետևողական լինեն և հաջորդ ուսումնական տարում տարբեր առիթներով անդրադառնան հանձնարարված գրքերին, քննարկեն աշակերտների նախասիրություններին համահունչ թեմաները, հանձնարարեն շարադրություններ և այլն:

Ընթերցանության ուսուցման խրախուսիչ մեթոդներից են գրքի քննարկումները, որոնք ժամանակ առ ժամանակ պետք է կազմակերպի ուսուցիչը: Երեխաներն իրենց սիրելի գրքի մասին նախապես պատրաստում են նյութեր, պատմում, թե ինչ են սովորել գրքից: Նման դեպքերում սովորաբար ծավալվում է ակտիվ քննարկում. սովորողները լրացնում են իրար, հարցեր տալիս, բանավիճում, ստուգում միմյանց: Նման քննարկումներն արդյունավետ են, որովհետև հետո ընկերները, լսելով այս կամ այն գրքի մասին, ուզում են կարդալ: «Ընթերցանությունը հարստացնում է ինձ: Ես ստանում եմ ավելի շատ գիտելիքներ, դառնում ավելի ինքնավստահ և ավելի լավ եմ հասկանում շրջապատող մարդկանց», «Գրքերը սովորեցնում են երբեք չհանձնվել, պատրաստ լինել հաղթահարելու հանդիպած դժվարությունները», «Գրքերն ուժ ու իմաստություն են սովորեցնում». սովորաբար այս կարծիքներն են հայտնում ընթերցողները որպես եզրահանգում:

Շատ հաճախ ուսումնական տարվա ընթացքում աշակերտը ուսումնական թեմաների (երբեմն՝ դժվարամարս) յուրացման պատճառով լրացնելու: Ընթերցասերներին հուզող առաջին հարցն է՝ ի՞նչ գիրք կարդալ: Պարզ է, որ բոլոր գրքերը կարդալու համար մի ամբողջ կյանք անգամ չի հերիքի: Այդ պատճառով էլ ուսուցչի դերակատարությունն այստեղ անփոխարինելի է. շատ կարևոր է տարիքային տարբեր խմբերի համար գրքերի ճիշտ ընտրությունը: Որպես օգնություն գրականության ուսուցիչներին կազմել են լրացուցիչ գրականության ցանկ՝ ամառային արձակուրդներին աշակերտներին հանձնարարելու համար: Երաշխավորվում է այն ընդունել որպես ուղեցույց և ցանկության ու նպատակահարմարության դեպքում լրացնել ըստ ուսուցչի և աշակերտների նախասիրությունների: Կարելի է անգամ խորհուրդ տալ աշակերտ-ընթերցողներին՝ հատուկ տեսքով գրառումներ անել կարդացած գրքի դուր եկած հատվածներից՝ հետագայում ընկերներին պատմելու կամ քննարկելու նպատակով: Ուսուցիչները պետք է հետևողական լինեն և հաջորդ ուսումնական տարում տարբեր առիթներով անդրադառնան հանձնարարված գրքերին, քննարկեն աշակերտների նախասիրություններին համահունչ թեմաները, հանձնարարեն շարադրություններ և այլն:



Շատ հաճախ ուսումնական տարվա ընթացքում աշակերտը ուսումնական թեմաների (երբեմն՝ դժվարամարս) յուրացման պատճառով լրացնելու: Ընթերցասերներին հուզող առաջին հարցն է՝ ի՞նչ գիրք կարդալ: Պարզ է, որ բոլոր գրքերը կարդալու համար մի ամբողջ կյանք անգամ չի հերիքի: Այդ պատճառով էլ ուսուցչի դերակատարությունն այստեղ անփոխարինելի է. շատ կարևոր է տարիքային տարբեր խմբերի համար գրքերի ճիշտ ընտրությունը: Որպես օգնություն գրականության ուսուցիչներին կազմել են լրացուցիչ գրականության ցանկ՝ ամառային արձակուրդներին աշակերտներին հանձնարարելու համար: Երաշխավորվում է այն ընդունել որպես ուղեցույց և ցանկության ու նպատակահարմարության դեպքում լրացնել ըստ ուսուցչի և աշակերտների նախասիրությունների: Կարելի է անգամ խորհուրդ տալ աշակերտ-ընթերցողներին՝ հատուկ տեսքով գրառումներ անել կարդացած գրքի դուր եկած հատվածներից՝ հետագայում ընկերներին պատմելու կամ քննարկելու նպատակով: Ուսուցիչները պետք է հետևողական լինեն և հաջորդ ուսումնական տարում տարբեր առիթներով անդրադառնան հանձնարարված գրքերին, քննարկեն աշակերտների նախասիրություններին համահունչ թեմաները, հանձնարարեն շարադրություններ և այլն:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՄ

5-6-րդ դասարաններ

- 1. Հովհաննես Թումանյան, «Հեքիաթներ»
2. Ղազարոս Աղայան, «Հեքիաթներ»
3. «Հայ ժողովրդական հեքիաթներ»
4. Շարլ Պերրո, «Հեքիաթներ»
5. Հանս Անդերսեն, «Հեքիաթներ»
6. Քիպլինգ, «Ջունգլիների գիրքը» (Մաուզլիի մասին)
7. Ի. Ռոուլինգ, «Հարրի Փոթեր»
8. Անտուան դը Սենտ Եքզյուպերի, «Փոքրիկ իշխանը»
9. Վախթանգ Անանյան, «Պատմվածքներ», «Սևանի ափին»
10. Վախթանգ Անանյան, «Հովազածորի գերիները»
11. Սերո Խանգաղյան, «Քարանձավի բնակիչները»
12. Ստեփան Զորյան, «Պատմվածքներ»
13. Պարույր Սևակ, «Զեր ծանոթները» (մանուկների համար)
14. Արա Աբգարյան, «Անդրորդության արարիչը» (Մեսրոպ Մաշտոցի մասին)
15. Սուրեն Մուրադյան, «Մանկական բանաստեղծություններ»
16. Ավետիք Իսահակյան, «Հեքիաթներ», «Պատմվածքներ»
17. Լեոնարդո դա Վինչի, «Հեքիաթներ», «Պատմվածքներ»
18. Մուշեղ Գալշոյան, «Մամփրե արքան»

7-8-րդ դասարաններ

- 1. Արամ Դանալանյան, «Ավանդապատում»
2. «Հայ հին առասպելներ», «Հայկական վիպաշխարհ»
3. Շառլ Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»
4. Ստեփան Զորյան, «Մի կյանքի պատմություն»
5. Գուրգեն Մահարի, «Մանկություն», «Պատանեկություն»
6. Հեկտոր Մալո, «Առանց ընտանիքի»
7. Սիլվա Կապուտիկյան, «Ստորումներ ճանապարհի կեսին», «Բանաստեղծություններ»
8. «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», «Տաղարան»
9. Վիգեն Խեչումյան, «Գիրք լինելության»
10. Պարույր Սևակ, «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմը
11. Պարույր Սևակ, «Մարդը ափի մեջ» ժողովածուն,
12. Հովհաննես Շիրազ, «Հուշարձան մայրիկիս»
13. Հրանտ Մաթևոսյան, «Պատմվածքներ»
14. Աղասի Այվազյան, «Պատմվածքներ»
15. Ռաֆֆի, «Սամվել»
16. Ալեքսանդր Շիրվանզադե, «Կյանքի բովից»
17. Կիմ Բակլի, «Արծիվն ու սուրը» (Հայաստանի մասին)

- 18. Վ. Բիտով, «Հայաստանի դասերը»
19. Կուն, «Հին հունական գրույցներ ու լեզվեր»
20. Մայն Ռիդ, «Անգլուխ ծիպորը»
21. Ժյուլ Վեռն, «Տասնհինգամյա նավապետը», «Նավապետ Գրանտի որդիները»
22. Ռոբերտ Ստիվենսոն, «Գանձերի կղզին»

9-10-րդ դասարաններ

- 1. «Սասնա ծռեր» դյուցազներգությունը
2. Հոմերոս, «Իլիական», «Ոդիսական»
3. Կորյուն, «Վարք Մաշտոցի»
4. Մովսես Խորենացի, «Պատմություն հայոց»
5. Փավստոս Բուզանդ, «Պատմություն հայոց»
6. Ներսես Շնորհալի, «Հանելուկներ», «Պոեմներ»
7. Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության»
8. Արաքսմանյան, «Ազատությունն աքսորական» (Մ. Նալբանդյանի մասին)
9. Ռաֆայել Պատկանյան, «Բանաստեղծություններ»
10. Հովհաննես Թումանյան, «Բանաստեղծություններ», «Պատմվածքներ», «Քառյակներ», «Պոեմներ»
11. Ավետիք Իսահակյան, «Հուշեր Հ. Թումանյանի մասին»,
12. Ռուբեն Զարյան, «Հուշեր» (իր ժամանակի գրողների մասին)
13. Վիլյամ Սարոյան, «Մարդկային կատակերգություն»
14. Դերենիկ Դեմիրճյան, «Վարդանանք», «Պատմվածքներ»
15. Պարույր Սևակ, «Նորից քեզ հետ» շարքը, «Անցյալը ներկայացած» (ինքնակենսագրական)
16. Ակսել Բակունց, «Պատմվածքներ»
17. Մուրացան, «Գևորգ Մարզպետունի»
18. Համո Սահյան, «Բանաստեղծություններ»
19. Նաիրի Զարյան, «Արա Գեղեցիկ» պոեմը
20. Եղիշե Չարենց, «Բանաստեղծություններ»
21. Վահան Տերյան, «Բանաստեղծություններ»
22. Հրանտ Մաթևոսյան, «Վիպակներ»
23. Ալեքսանդր Շիրվանզադե, «Քաոս», «Դրամաներ»
24. Խաչիկ Դաշտենց, «Խղիճդան», «Ռանչպարների կանչը»
25. Ստեփան Ալաջաջյան, «Եղեգները չխոնարհվեցին»
26. Գևորգ Էմին, «Յոթ երգ Հայաստանի մասին», «Հավերժի ճամփորդը»
27. Վարդգես Պետրոսյան, «Հայկական եսքիզներ», «Մենավոր ընկուզենի», «Վերջին ուսուցիչը», «Ապրած և չապրած տարիներ»

- 28. Վահրամ Փափազյան, «Հետադարձ հայացք»

11-12-րդ դասարաններ

- 1. «Հայ ազգային ծեսեր»
2. «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա»
3. «Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա»
4. «Սփյուռքահայ գրականություն»
5. «Օտարալեզու հայ գրողներ»
6. Միքայել Շափրյան, «Արծաթ դար» (Կիլիկիայի, Մխիթար Գոշի մասին)
7. Ալբերտ Արիստակեսյան, «Պարույր Սևակ»
8. Պարույր Սևակ, «Անլռելի գանգակատուն», «Երգ երգոց» պոեմները, «Եղիցի լույս» ժողովածուն
9. Ռաֆֆի, Վեպեր
10. Գաբրիել Սունդուկյան, Դրամաներ
11. Եղիշե Չարենց, Պոեմներ
12. Նար-Ղոս, Վիպակներ
13. Լևոն Շանթ, «Հին աստվածներ»
14. Ստեփան Զորյան, «Պապ թագավոր», «Հայոց բերդը»,
15. Սերո Խանգաղյան, «Մխիթար սպարապետ», «Թագուհին հայոց»
16. Գուրգեն Մահարի, «Ծաղկած փշալարեր», «Այրվող այգեստաններ»
17. Կոստան Զարյան, «Տատրագոմի հարսը»
18. Շահան Շահնուր, «Նահանջը առանց երգի»
19. Սևդա Սևան, «Ռոդոսթո, Ռոդոսթո»
20. Դանթե, «Աստվածային կատակերգություն»
21. Բալզակ, «Մարդկային կատակերգություն»
22. Աննա Պետրոսյան, «Մոզ քաղաքի կործանումը»
23. Լևոն Աղյան, «Հեռացող եղբոր»
24. Լևոն Խեչոյան, «Միտերի դռան գիրքը»
25. Շահեն Թաթևյան, «Երիցս խաչված», «Բալենի»
26. Երիկ Մարիա Ռեմարկ, «Հաղթական կամար», «Երեք ընկեր»
27. Աննա Ֆրանկ, «Օրագիր՝ նամակների տեսքով»
28. Լև Տոլստոյ, «Պատերազմ և խաղաղություն»
29. Դոստոևսկի, «Ոճիր և պատիժ»
30. Գաբրիել Գարսիա Մարկես, «Հարյուր տարվա մենություն»

Ելիգավեդա ՄԻՋՈՅԱՆ ԿԳՍ նախարարության ԿՊՏ հայոց լեզվի և գրականության տեսուչ, Բ.Գ.Թ.



ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Բարդ քանակական խնդիրների լուծումը կազմված է հետևյալ տարրերից՝ խնդրի պայմանի ընթերցում, պայմանի կարճ գրառում, պայմանի կրկնություն, միատի, գծագրի կամ սխեմայի կատարում, խնդրի ֆիզիկական բովանդակության և լուծման եղանակի պարզաբանում, լուծման պլանի կազմում, լուծման ընդհանուր տեքստի կազմում, հաշվում, արդյունքների քննարկում և լուծման ստուգում:

Բերված սխեման հնարավորություն է տալիս աստիճանաբար և բազմակողմանի մտածողությամբ լուծել խնդիրը և ստանալ պատասխանները: Բերված սխեման օրինակելի է, բայց պարտադիր չէ բոլոր խնդիրների համար:

Կանգ առնենք, թեկուզ կարճ, սխեմայում նկարագրված յուրաքանչյուր փուլի վրա:

**խնդրի պայմանի ընթերցում:** Տեքստի ընթերցումը պետք է լինի արտահայտիչ, անշտապ: Շատ դեպքերում խնդրի պայմանի ընթերցումը պետք է կատարի ուսուցիչը: Դա կարելի է աստիճանաբար սովորեցնել աշակերտներին:

Խրախուսվում է նաև հետևյալ ձևը. աշակերտը մտքում ընթերցում է խնդիրը, իսկ բովանդակությունն արտահայտում է իր բառերով: Դրանից հետո եթե անհրաժեշտություն կա, ուսուցիչը պարզաբանում է անհասկանալի տերմինները և բարդ հասկացությունները:

Շատ դեպքերում ուսուցիչն այն կարող է առաջարկել նաև աշակերտներին՝ ինչպես են նրանք հասկանում այս կամ այն տերմինը:

**խնդրի պայմանի քննարկման** ընթացքում հասնել ճիշտ եզրահանգման: Այսպեսից հետո կատարում են խնդրի կարճ գրառում, որի մասին կխոսվի քիչ հետո:

**խնդրի պայմանի կրկնում:** Ելնելով խնդրի պայմանի կարճ գրառումից՝ աշակերտները կրկնում են այն: Սա ուսուցչին հնարավորություն է տալիս իմանալ՝ աշակերտները հասկացել են նրա բովանդակությունը: Դրա համար ուսուցիչը մի քանի աշակերտների առաջարկում է կրկնել այն իրենց բառերով, բայց պահպանելով նրա բովանդակությունը: Այսպեսից հետո միայն ուսուցիչը խնդրի պայմանի յուրաքանչյուր ստուգում է հարցերով և պարզում, թե անհրաժեշտություն կա՞ գծագրերի, սխեմաների և այլ:

**Գծագրի, միատի, սխեմայի կատարում:** Շատ դեպքերում խնդրի լուծումը հանգում է գծագրի, միատի կամ սխեմայի կատարման, որը հեշտացնում է խնդրի պայմանը ոչ ուղիղ հասկանալը և լուծման ռազմավարական կրկնությունը:

**Գրաֆիկական և ստատիկ ընդունիչի** խնդիրների լուծման ժամանակ գծագիրը, սխեման կամ միատը կարելի է կատարել ընթացքում: Որոշ դեպքերում սկզբում կատարում են աշխատանքային գծագիրը՝ ելնելով խնդրի պայմանից: Լուծումից հետո միայն կատարում են գծագիրը՝ պահպանելով մասշտաբը և անհրաժեշտ այլ պայմաններ: Աշակերտներն այդ գծագրերը կատարում են տեսքերում:

**խնդրի պայմանի վերլուծություն:** Խնդրի մեկնաբանման ժամանակ նախ և առաջ ուշադրություն են դարձնում խնդրի ֆիզիկական էության, նրա պայմանների և օրենքների վրա, որն արժարժվում է սովալ խնդրի պայմանի մեջ՝ կապ ստեղծելով ֆիզիկական մեծությունների միջև:

Չարկավոր է համբերատարությամբ, սկսած 6-րդ դասարանից, աշակերտներին քայլ առ քայլ սովորեցնել կատարել խնդրի պայմանի վերլուծություն՝ պարզելու նրա լուծման ճիշտ եղանակը: Խնդրի պայմանի վերլուծությունը զարգացնում է աշակերտների տրամաբանական մտածողությունը, մշակում գիտական մոտեցում խնդրի լուծմանը:

Խնդրի պայմանի վերլուծությունն աստիճանաբար բացում է այն հարցերի գաղտնիքը, որի պարզաբանմամբ աշակերտը հասնում է խնդրի լուծման ռազմավարական եղանակին:

Որոշ դեպքերում անհրաժեշտ է քննարկել խնդրի լուծման մի քանի տարբերակներ՝ հակադրելով իրար և ընտրելով նրանցից ռազմավարը: Դրա հետ մեկտեղ աշակերտներին պետք է սովորեցնել ինքնուրույն վերլուծել խնդիրը՝ պահանջելով նրանցից միանգամայն գիտակից և կազմակերպված վերլուծություն:

**խնդիրների լուծում:** Պայմանի քննարկումից հետո անցնում ենք խնդրի լուծմանը: Այն պետք է ընթանա կարճ բացատրությամբ: Չաշվումը պետք է կատարել ռազմավար մեթոդներով, իսկ գրառումը՝ անվանումներով: Խնդրի պատասխանը պետք է ընդգծել: Այս բոլորն աշակերտներին կստիպեն լինել ուշադիր, կարգապահ ու զորձունյալ:

**Պատասխանի գնահատում և ստուգում:** Անհրաժեշտ է ստուգել ստացված պատասխանը: Առաջին հերթին աշակերտների ուշադրությունը պետք է սևեռել պատասխանի ռեալ լինելու վրա: Շատ դեպքերում աշակերտներն ստանում են ոչ ռեալ՝ առողջ մտքին հակադրող պատասխան: Դա նրանից է, որ հաշվման ժամանակ նրանք կտրում են խնդրի պայմանի հետ ունեցած կապը: Այս թրուկները շտկելու համար աշակերտին պետք է սովորեցնել խնդրի պատասխանը գնահատել ոչ միայն մաթեմատիկական տեսանկյունից, այլ նաև ֆիզիկական, որպեսզի նա իսկույն նկատի այնպիսի վրիպումներ, ինչպիսին են, օրինակ՝ 0.գ.գ.-ն մեծ է 100%-ից, ջրի ջերմաստիճանը փոքր է 0°-ից և մեծ է 100°-ից, երկաթի խտությունը մեծ է 7,8գ/սմ³-ից և այլն:

Աշակերտները պետք է իմանան, որ խնդիրների պատասխանների ճշտության ստուգման մի մեթոդն էլ այն ուրիշ եղանակով լուծելն է և ստացված պատասխանների համեմատումը կամ էլ լուծման գործողության կատարումը միավորների հետ: Պետք է նշել, որ այս վերջին մեթոդը շատ դեպքերում հուսալի չէ: Օրինակ՝ աշակերտը որևէ թվային գործակից ճիշտ չի գրել, այս դեպքում պատասխանի չափականության վրա չի ազդի, և սխալը կմնա աննկատելի: Այս մեթոդն ավելի լավ

արդյունք է տալիս, երբ կիրառվում է մնացած մեթոդների հետ համակցված:

ԽՆԴԻՐ ԴԱՅՄԱՆԻ ԳՐԱՌՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՉԵՎԵՐԸ

**խնդրի պայմանի գրառման ձևերը:** Կարելի է կիրառել խնդրի պայմանի գրառման մի քանի ձևեր, բայց նրանցից յուրաքանչյուրը պետք է լինի կարճ և պարզ: Վերև ասվածը կիրառենք կոնկրետ օրինակների վրա:

**խնդիր 1.** Գետի վրա առաջացած սառույցը դիմադրում է ոչ ավելի, քան  $7 \times 10^4$  ճնշման: Ի՞նչ առավելագույն զանգվածով տրակտոր կարող է անցնել այդ սառույցի վրայով: Տրակտորի մեկ թրթուրի լայնությունը 0,2մ է, իսկ գետնին հավող մասի երկարությունը՝ 1,6մ:

**խնդիր 2.** Որոշել 150մ երկարությամբ և 0,2մմ ընդլայնական կտրվածքով միջրոմե հաղորդալարի դիմադրությունը:

**I եղանակ**

<b>խնդիր 1.</b> ճնշումը՝ $7 \times 10^4$ Ն/մ² Լայնությունը՝ 0,2մ երկարությունը՝ 1,6մ	<b>խնդիր 2.</b> տրված է $e=150$ մ $s=0,2$ մմ² $\delta=1,1 \frac{\text{օհմ}\cdot\text{սմ}^2}{\text{մ}}$
----- զանգվածը-?	----- R=?

Խնդիրների պայմանների գրառման ամենատարածված այս եղանակը ունի թրթուրներ: Նախ աշակերտներն ինքնուրույն լուծման ժամանակ չեն կարողանում կռահել, թե ինչ մեծություններ կարելի է իսկույն մտցնել գրառման մեջ, իսկ արդեն ընթացքում, երբ զգացվում է դրա անհրաժեշտությունը, նրանք մտցնում են գրառած պայմանի տողերի արանքը՝ դրանով խանգարելով գրառման կարգը և կուլտուրան: Բացի դրանից, երբ մոռանում են խնդրի բովանդակությունը, այդպիսի գրառմանը չեն կարող նորից վերհիշել:

**II եղանակ**

Այս եղանակով գրառման ժամանակ նշվում է առարկան կամ երևույթը, որի մասին խոսք է գնում:

Լրացուցիչ արյուսակային տվյալները գրվում են հարցի տակ, կամ էլ նրանց համար բաց է թողնվում 1-2 տող տրված մեծությունների գրառումից հետո: Այս ձևով գրառումն ունի հետևյալ տեսքը.

**խնդիր 1.**  
Տրակտորի թրթուրի երկարությունը (e)=1,6մ  
թրթուրի լայնությունը (a)=0,2մ  
տրակտորի զանգվածը-?  
ճնշումը սառույցին (p)=  $7 \times 10^4$  Ն/մ²

**խնդիր 2.**  
Կիցրոմե հաղորդալար  
e= 150մ  
s= 0,2մմ²  
-----  
R=?  
 $\delta=1,1 \frac{\text{օհմ}\cdot\text{սմ}^2}{\text{մ}}$

Այս կարգի գրառումը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերհիշել խնդրի բովանդակությունը:

**III եղանակ**

Շատ ուսուցիչներ և մեթոդիստներ խորհուրդ են տալիս խնդրի պայմանը գրառել այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ տրված է խնդրի մեջ:

**խնդիր 1.**  
ճնշումը սառույցին (p)= $7 \times 10^4$  Ն/մ²  
տրակտորի զանգվածը=?  
թրթուրի լայնությունը (a)=0,2մ  
թրթուրի երկարությունը (e)=1,6մ

**խնդիր 2.**  
Կիցրոմե հաղորդալար  
R=?  
e=150մ  
s=0,2մմ²  
 $\delta=1,1 \frac{\text{օհմ}\cdot\text{սմ}^2}{\text{մ}}$

Այս գծով գրառված խնդրի պայմանն ունի այն թրթուրները, որ այստեղ քողարկված է խնդրի պահանջը:

**IV եղանակ**

Այս եղանակի ելությունն այն է, որ սկզբից ենք գրվում է խնդրի պայմանի պահանջը, իսկ հետո մնացած տվյալները՝ առանց կարգի խախտելու:

**խնդիր 1.**  
Տրակտորի զանգվածը (m)=?  
երկարությունը (e)=16մ  
լայնությունը (a)=0,2մ  
 $\delta=0,2$ մմմ  
ճնշումը (p)=  $7 \times 10^4$  Ն/մ²

**խնդիր 2.**  
Կիցրոմե հաղորդալար  
R=?  
e=150մ  
 $\delta=1,1 \frac{\text{օհմ}\cdot\text{սմ}^2}{\text{մ}}$

Մեր կողմից վերը թվարկված բոլոր եղանակները, խնդրի պայմանի գրառումն օրինակելի են, բայց առավել արժարժ աստեղ 4-րդ եղանակն է:

**խնդրի լուծման կարճ գրառման եղանակները:**  
Խնդրի լուծման կարճ գրառման համար տարբեր ուսուցիչներ իրենց աշակերտներին ներկայացնում են տարբեր պահանջներ: Որոշները պահանջում են խնդրի լուծումը պլանով, որոշները՝ կարճ բացատրությամբ, երրորդները բավարարվում են միայն հաշվումներով:

Քննարկենք այդ 1-ին խնդրի օրինակով:  
**I եղանակ**  
1. Տրակտորի մեկ թրթուրի մակերեսը 0,2մ x

1,6մ=0,32մ²  
2. Երկու թրթուրների մակերեսը միասին կլինի  $0,32մ^2 \times 2=0,64մ^2$   
3. Տրակտորի կշիռը կլինի  $9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} \times m$  կգ = 9,8m

4. Տրակտորի ճնշումը՝  $9,8 \times m$ :  $0,64մ^2 = 7 \times 10^4$  Ն/մ²  
 $m = \frac{0,64 \cdot 10^4 \cdot 7 \times 10^4 \cdot \frac{\text{կգ}}{\text{մ}^3}}{9,8 \cdot \frac{\text{Ն}}{\text{կգ}}} \approx 4480$  կգ  
Պատասխան՝ 4480 կգ

**II եղանակ**  
1. Si=e x a=0,2մ x 1,6մ=0,32մ²  
2. S=2Si=0,32մ² x 2= 0,64մ²  
3. F=  $9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}}$  m կգ = 9,8m


4.  $P = \frac{F \cdot 98m}{s \cdot s^2}$   
 $m = \frac{P \cdot s}{9,8} \approx 4480$  կգ

**I եղանակը** թույլատրելի է VI դասարանում, քանի որ նրանք դեռ նոր են սկսել հանրահաշվի ուսումնասիրումը, բացի դրանից, նրանք լուծումը կատարում են գիտակցորեն:

**II եղանակը** կիրառվում է քիչ ուշ, երբ նրանք արդեն ավելի լավ են տիրապետում հանրահաշվին: Մաթեմատիկայից նոր ծրագրերին անցնելը հնարավորություն է տալիս համարձակորեն հենց սկզբից էլ աշակերտներին սովորեցնել լուծել խնդիրները **II եղանակով**, քանի որ այդ եղանակով լուծելով՝ շահում ենք ժամանակի մեջ:

Որպեսզի խնդրի լուծումը չլրի ձևական բնույթ, պետք է աշակերտներին պահանջել կատարել նրա պայմանի մանրամասն քննարկում, որից հետո միայն անցնել լուծման՝ բացատրելով նրա ընթացքը: Օրինակ՝

Խնդիր: Գործողի նկատմամբ α անկյան տակ թեքված հարթության վրայով H բարձրությունից առանց սկզբնական արագության, սահում է m մասսան և g լիցք կրող փոքրիկ մարմինը, որի շփման գործակիցը հարթության հետ μ է: Միստեմը գտնվում է E լարվածության համասեռ դաշտում, որի ուժագծերը հորիզոնական են: Որոշել ա) մարմնի արագությունը, բ) արագությունը թեք հարթության հիմքի մոտ, գ) սափքի ժամանակը:




Գրենք Նյուտոնի 2-րդ օրենքը պրոյեկցիաների տեսքով՝  $\Sigma F_x = -m a_x$   
 $\Sigma F_y = m a_y = 0$   
 $\begin{cases} m g \sin \alpha - \mu N - q E \cos \alpha = m a \\ m g \cos \alpha + q E \sin \alpha = N \end{cases}$  որտեղից՝  
 $a = \frac{m g (\sin \alpha - \mu \cos \alpha) - q E (\mu \sin \alpha + \cos \alpha)}{m}$

Արագությունը հաշվելու համար օգտվենք  $V^2 = 2 a L$  բանաձևից, որտեղ՝  $L = \frac{H}{\sin \alpha}$ ,  $V = \sqrt{\frac{2 a H}{\sin \alpha}}$

Սափքի ժամանակը որոշելու համար կարելի է օգտվել  $L = \frac{a t^2}{2}$  կամ  $V = a t$  բանաձևերից:

**խնդիր:** Մետաղյա չորսուն շարժվում է P° խտության հեղուկի մեջ: Մետաղի խտությունը P° է: Որոշել դաշտի լարվածությունը մետաղի ներսում և բացատրել դաշտի առաջացման պատճառը: Էլեկտրոնի լիցքը e է, մասսան՝ m:



Տրված է  
E=?  
հեղուկի խտությունը՝ P°  
մետաղի խտությունը՝ P°  
էլեկտրոնի լիցքը՝ e  
էլեկտրոնի մասսան՝ m  
Չորսուն կշարժվի արագացումով: Այն կորոշենք՝ օգտվելով Նյուտոնի 2-րդ օրենքից.

$m g - P g V = m a$   
 $a = g \frac{P - P_0}{P}$   
Ազատ էլեկտրոնները չորսուկի արագացող շարժման հետևանքով կվերաբաշխվեն՝ չորսուկի վերևի մակերևույթում կկուտակվեն էլեկտրոնները, ներքևի մակերևույթը կլիցքավորվի դրական: Էլեկտրոնների վերաբաշխումը կկատարվի այն ժամանակ, երբ ստեղծված դաշտն ապահովվի էլեկտրոնների a արագացումով:

Շարժումը՝  $e E = m a$  և  $E = \frac{m - P_0}{e g} \frac{P - P_0}{P}$   
Պատասխան՝  $E = \frac{m}{e g} \frac{P - P_0}{P}$

**Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ**  
Սզնեքի միջն. դպրոց

Շնորհավորանք  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԴԱՄԵՐՆ  
ՈՒՍՈՒՅԱՆՆԵՐՈՎ



Լրացավ ազնիվ, կուրախի վի կողմից հարգանք ու վստահություն վայելող մեր գործընկերոջ՝ Կարինե Պետրոսյանի ծննդյան 60-ամյակը:

Ծնվել է Ստեփանակերտ քաղաքում: 1966-76թթ. սովորել է հ.2 միջնակարգ դպրոցում: 1977-ին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1982 թվականից աշխատել է ռադիոհաղորդումների մարզային կոմիտեում: 1999 թվականից առաջ սօր աշխատում է հ.7 հիմնական դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

Կարինե Պետրոսյանը մատաղ սերնդի ուսուցչուհի է: Նրա դաստիարակության ամենացորդ նվիրյալ է, բարու և ազնվության տիպար:

Աշակերտներին սովորեցնում է պատմության կարևոր տարեթվերն ու իրադարձությունները, հաղթանակներն ու պարտությունները: Ուսուցչուհուն հաջողվում է գտնել մատաղ հոգիների բանալին, ուղղորդել նրանց պատմության դժվարին ու հետաքրքիր ճանապարհով:

Ընկեր Պետրոսյանը լավ հոգեբան է, նա չի կաշկանդում իր սաներին, ընդհակառակը, ամեն կերպ զարկ է տալիս նրանց ինքնուրույնությանը՝ յուրաքանչյուրին հնարավորություն տալով ճաշակել իր հայտնաբերած ճշմարտության բերկրանքը:

Պատմության ամեն դաս նորություն է նրա սաների համար: Ամեն ինչից կարողանում է աշակերտների համար հետաքրքրող ինչ-որ բան առանձնացնել:

Լավագույն մարդիկ ճանաչվում են բարձր բարոյական հատկանիշներով, զարգացման մակարդակով: Վեհ բարոյականությամբ առաքինի այդ կինն իր անունն ու ճանապարհը կերտում է անձնական օրինակով:

Սիրելի՛ գործընկեր, մարդուն ենք առողջություն, անսպառ եռանդ, հաջողություններ: Թող ժպիտը միշտ շողա Ձեր բարի դեմքին:


Ստեփանակերտի  
Ե.Չարնեցի անվան  
հ.7 հիմնական դպրոցի  
ուսուցչական  
կոլեկտիվ



## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ

# ԱՐՃԱՆՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՌԵՄԲՈՆ

### (Արմո՛ 1967-1992)



Չափարցի Արմեն Բենիկի Սադյանը խաժակն, բարձրահասակ, քիկնեղ, գորովագույթ, կատակասեր, մեծ ուժով (Ռեմբոնականում, XX դարի վերջին ամերիկյան կինոյի ուժեղ հերոսի անունից) երիտասարդ էր՝ Արցախյան գոյապայքարի անկումը ներկայացուցիչներից ու առաջամարտիկներից մեկը: Շատ էր սիրում ու հաճախակի երգում՝ «Ա՛խ, իմ հայրենիքի ջուրը»: Լավ և գերազանց զնահատակամենտով ավարտել էր ծննդավայրի դպրոցը, որը հիմա կրում է իր անունը: Ուսանել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Սովորելու տարիներին մեկնել է խորհրդային բանակ, ծառայությունից հետո շարունակել ուսումը: Արցախյան գոյապայքարի գործում մասնակիցներից էր առաջին իսկ օրից: 1988թ. փետրվարի 13-ին տեխնիկումի ուսանողների երթն առաջնորդել է Ստեփանակերտի հրապարակ՝ հանրահավաքի: Այս կապակցությամբ արժե հիշատակել Արտո Մարտիրոսյանի և Լուսինե Ավանեսյանի 2017թ. լույս ընծայած «Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում» գրքում վաստակաշատ անասնաբույժ Պավել Սադյանի հիշատակումը: «Պետք է նշել, որ

մարզում առաջինը եռագույնը հրապարակ տեղափոխեցին տեխնիկումի ագրոնոմիական բաժնի սովորողներ Արմեն Սադյանը և Արայիկ Ավանեսյանը»:

Մարզային դատարանի շուրջը խմբված բյուրավոր ցուցարարներից ամենահամարձակն Արմենն էր, որը պատի ետնամասով բարձրացավ երկրորդ հարկ, ջարդեց պատուհանի ապակին, մտավ պահասենյակ, «հափշտակեց» Գոյապայքարի լիդերներից մեկի՝ Ներսիսյանի դեմ հարուցված դատական փաստաթղթերը՝ վնասելով ոտքը (երկար ժամանակ կաղալով էր ման գալիս): «Կռունկ»-ի անդամ էր:

Հայրենասեր ուսանողը հաճախակի էր լինում ծննդավայրում և մասնակցում երիտասարդների հավաքություններին, գիշերային և ազգապահպան հերթապահություններին, իրազեկում մարզկենտրոնի՝ Արցախյան գոյապայքարի գաղտնի ծրագրերին, ոգևորում ազերիներին դրկից ապրող համագյուղացիներին: Չեռնարկում էր արժանահիշատակ միջոցառումներ, համագյուղացիների որոշ առաջարկություններ ներկայացնում Շարժման կենտրոն: Արմեն Սադյանը 1990թ. անդամագրվում է «Արցախ» հայրենակցական միությանը: Գյուղի մանչուկներին յուրատիպ սիրով էր վերաբերվում: Օրինակ, այդ տարիների ամանորներին Չմեռ պապիկին հազունտով այցելում էր յուրաքանչյուր տուն, զվարճացնում փոքրերին...

Մի ամանորի ես ընտանիքով գյուղում էի: Իմ հայրական տնից ուշ երեկոյան գնում էինք կեսրայրիս տուն: Ճանապարհին հանդիպեցինք Արմոյին: Չմեռ պապի հագուստով էր, նվերների փոքրիկ պայուսակը դատարկ կողքից կախ էր: Ինչքան էլ զգես-

տափոխվեր, Արմոյին չէի շփոթի (իմ աչքի առաջ մեծացածն էր): Ասացի՛ վա՛յ, Չմեռ պապի պայուսակը դատարկ է: Չեռքիս եղած կոնֆետն ուզեցի պայուսակի մեջ դնել: Իսկույն վրա բերեց.

- Առավոտից աշխատում եմ... Երեխաները շատ են ուրախանում: Բոլորն ասում են՝ Չմեռ պապը չի ուտում: Շատ քաղցած եմ, ափիս մեջ դիր, ուտեմ...

Մնացի ապշած. Նոր տարում մարդ քաղցած մնա՞... Երեխա-



*Արմոն խորհրդային բանակում*

ներին ոգևորողը, զվարճացնողը մոռացել էր իրեն: Հանգիստ ավելացրեց.

- Գոյապայքարի մարզվածներից եմ, լավ քեֆ էլ ենք անում, օրերով կիսաքաղց էլ ենք մնում... Ձիմվորակների սուրբ օրերնքն է: Տես պայուսակիս կարմիր խաչը՝ պարտավոր ենք միայն օգնել:

Արմենի անունը մտել էր Պու-

յանիչկո-Սաֆոնով դահիճ-դեկավարների՝ «Արցախի անհնազանդներ» սև ցուցակը: Ստիպված հաճախ փոխում էր մնալու տեղերը և ավելի հաճախակի մասնակցում գիշերային հերթապահություններին: Ազերիները Չափարցի կից պատմական Քարահունջում՝ Իմ. Գերեվենդում ծայրահեղություններ էին անում (անասունների գողությունից բացի սկսել էին մարդագողություն ու սպանությունները): Երիտասարդ Արմենի ձեռքին արդեն գնդացի կար, բայց գնդակները սահմանափակ էին: Ազերիներին դուրս քշելու պահանջ դրվեց ու կատարվեց: Դրան հաջորդեց ահավորը. նաև դուրս քշվեցին Չափարցիները: Արմոն խորհրդանիշ սև ժապավենը ճակատից չէր հանում, զենքը ձեռքից վայր չէր դնում, աչքերում անկյունագծով մեղմ ժպիտը չքացել էր, տխուր երգն էր շուրթին... Մասնակցում էր պայքարին, հերթապահում սահմանին, մասնակցում թշնամու քիկունքի բազմաթիվ հետախուզություններին: Ուներ նաև այլ ցավ՝ մերժել էր... սիրածը: Նրա անունը միշտ պահեց սրտում: Ֆոյերբախյան իմաստասիրական հայեցողությամբ էր նայում աշխարհին. սիրել՝ նշանակում է մարդ լինել: Այսպիսի անկյուն առաջամարտիկը կյանքը գոհեց հանուն Արցախի, հանուն այսօրվա ազատության: Սադյան Արմոյի ջինջ աչքերն իր հայրենի հողում միայն ազատություն էին ուզում տեսնել: Նրա համարձակությունը, սիրանքները հայտնի էին յուրաքանչյուր չափարցու: Գյուղի որ մասով անցներ, երանի էին տալիս ծնողներից՝ այդպիսի զավակ լույս աշխարհ բերելու, Արցախին նրա նման հերոս տղա նվիրելու համար: Արմո Սադյանը հավերժվեց Արցախյան գոյա-

պայքարի անմահների թանգարանում, նրանց նվիրված հուշամատյան սրբոց գրքում, իր Չափարցի (Հակառակաբերդ) նվիրված գրքի՝ Արցախյան գոյապայքարի անմահների շարքում: Փոքրուց աչքի էր ընկնում ճշտապահությամբ, ազնվությամբ, փոքրերին պաշտպանելու գիտակցությամբ, ցանկացած մրցույթում հաղթելու ունակությամբ: Գրագետ էր, ուշադիր, լսող, ընկալածը լավ մտապահող, գեղեցիկն ընդօրինակող, պետքականն ասող: Երազում էր Արցախի բուն ու իրավացի պատմությունը հաստատվող գրքերով տեսնել, ամենուր ՄԱՐԴ տեսնել, աշխարհում միայն խաղաղություն լինելու լինի...

2004թ. հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Չափարցի պանծալի հերոս Արմեն Սադյանի մասին եղել է ռադիոգրույց ավագ քրոջ՝ Ուսուցչուհի Ջուլիետա Սադյանի հետ (հեղինակ՝ Էդվարդ Մկրտչյան, 1994թ.), նույն թեման՝ «Արցախ» հանդեսում («Իմ պայքարին պարտություն չկա», Ստ., 1994թ. հ.3-4): Անվեհեր հերոսի մասին հրատարակվել են մի շարք հոդվածներ՝ Արմեն Սարգսյան, «Շիրմիդ հանգստություն, ազգի՛ նվիրյալ» (գիրք, Ստ., 2002թ., էջ 27), Իրինա Սևունյան, «Չափարցի հերոսը» («Դեմո» թերթ, 2005թ.), Ս. Մինասյան, «Հյուսիսային Արցախի Ռեմբոն» (հանրապետական գիտաժողով, Գյումրի, 2005թ.), Իրինա Հայրապետյան, «Անվեհեր է Արցախյան գոյամարտի ազատամարտիկը», («Լուսարար», 2015 թ.) և այլն:

**Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**  
**Բ. Գ. Թ., դոցենտ**

## ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՆԿԻՃ ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ



Արցախում գործող շատ մարզածեերի զարգացման ու ավելի արդյունավետ դարձնելու գործում մեծ դեր ունեն մարզադահլիճները: Ընդ որում, կարելու է ոչ միայն բուն մարզադահլիճի առկայությունը, այլև նրանում գոյություն ունեցող պայմանները, կահավորումը, եւ արդյո՞ք համապատասխանում է այն տվյալ մարզածեի պահանջներին: Արցախում մարզադահլիճների թիվն աճում է, ինչը վկայում է նաեւ մարզիկների թվի աճի մասին: Սա ողջունելի է բոլոր առումներով: Բայց այն, որ մայրաքաղաքում դեռես մարզադահլիճների պակասության խնդիր կա, փաստ է:

Այդ տխուր իրողությունն արդեն անցյալում է Արցախի վիճակում եւ թայջիի ֆեդերացիայի մարզիկների համար: Ստեփանակերտի Թումանյան 52/101 հասցեում նոր մարզադահլիճ է բացվել, որը կծառայի ֆեդերացիայի մարզիկների պատշաճ մարզումների անցկացմանը, ինչպես նաեւ բնակչության առողջ ապրելակերպին եւ ոչ միայն:

Նորաբաց հարմարավետ մարզադահլիճ-

նում հանդիպում ունեցանք ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Սայաթ Բաղդասարյանի հետ, որի ջանքերով հիմնադրվել է ֆեդերացիան, եւ որի ֆինանսական միջամտությամբ մարզադահլիճի համար ձեռք է բերվել համապատասխան տարածք: Շուրջ մեկ տասնամյակ Արցախում ընթացող վիճակում եւ թայջիի պարապմունքները պաշտոնականացվել են 2017թ. մարտին. ֆեդերացիայի ներքո համախմբել է շուրջ 30 մարզիկ: Սեփական մարզադահլիճ չունենալու պատճառով ֆեդերացիայի մարզիկներն իրենց պարապմունքներն անց էին կացնում մայրաքաղաքի մարզադահլիճներից մեկում, որտեղ պարապմունքներ են անցկացվում նաեւ այլ մարզածեերով: Մինչդեռ Ս. Բաղդասարյանի բացատրությունից իմացանք, որ վիճակում տեխնիկական խիստ տարբերվում է այլ մարտարվեստներից, հետեւապես դրանով պարապելու պայմաններն էլ են տարբերվում: Ընդհանրապես ցանկալի է, որ յուրաքանչյուր մարզածե է իր համապատասխան մարզադահլիճ ունենա: Մարզիչն այսպես է բացատրում.

- Նոր սեփական մարզադահլիճ ունենալու մտադրացում վաղուց կար: Վիճակում տեխնիկական յուրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ են հատուկ պայմաններ, հատուկ գույք, որոնք մեր մարզադահլիճներում չկան: Արդյունավետ մարզումների համար պետք է դրանք ստեղծել, ինչին և ձգտում ենք: Դրա համար կոնկրետ մարզադահլիճ է պետք, որը հնարավոր է կահավորել համապատասխան գույքով: Ինչպես նաեւ հնարավոր կլինի պարապմունքները կազմակերպել մարզիկների համար ավելի հարմար ժամի, քանի որ

ստիպված չենք լինի համաձայնեցնել պարապմունքների գրաֆիկը այլ մարզածեերով պարապող մարզիկների հետ: Վիճակում պարապողները լոկ մարզիկներ չեն, այստեղ միմյանց նկատմամբ ջերմ ու հարազատ վերաբերմունք կա, ինչպես որ ընտանիքի անդամների միջեւ: Իսկ յուրաքանչյուր ընտանիք իր օջախը պետք է ունենա: Սա ավելի է կարեւորում առանձին դահլիճ ունենալու անհրաժեշտությունը: Մեր ֆեդերացիան սերտ կապի մեջ է ՀՀ վիճակում ֆեդերացիայի հետ, ուր հաճախակի սեմինարներ ենք գնում: Այնտեղ պարապմունքներն սկզբունքորեն անց են կացվում հատուկ վիճակում ի համար կահավորված մարզադահլիճում, ինչը կարելու է նշանակություն ունի ինչպես մարզումների արդյունավետության, այնպես էլ ընդհանուր բարեհաճ մթնոլորտի համար: Վիճակում սիրահարների համար դա մեծ նշանակություն ունի:

Պարապմունքները նոր մարզադահլիճում սկսված են, իսկ զուգահեռ շարունակվում են նորոգման ու բարեկարգման աշխատանքները: Ֆեդերացիան պետական ֆինանսավորում չի ստանում՝ բացառությամբ տարբեր մրցաշարերում մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկների պարգևատրությունները: Մարզադահլիճը լրիվությամբ արագ վերանորոգելու եւ կահավորելու համար ֆինանսական աջակցություն է անհրաժեշտ: Ֆեդերացիան սիրով կընդունի բարեարական ցանկացած օգնություն:

Նոր մարզադահլիճը կծառայի ոչ միայն վիճակումների պարապմունքներին, այլև առողջ ապրելակերպի հետնորդներին եւ առանձին խմբերի ու անհատների պարապ-

մունքներին: Կարող են ընդգրկվել ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ սիրողական պարապողներ: Քանի որ այլևս տարածքի հետ կապված խնդիր չի լինի, ուրեմն՝ պարապողների թվի աճը կողջունվի: Մարզի խոսքով՝ ավելի շատ ուշադրություն կդարձվի թայջիի պարապմունքներին: Հիշեցնենք, որ թայջին շնչառական վարժությունների համակարգ է, որն ունի առողջարար բնույթ: Կգործի նաեւ առանձին ինքնապաշտպանություն սովորելու խումբ, որի դասընթացներին կարող են մասնակցել ոչ միայն մարզիկներ, այլև առանձին քաղաքացիներ՝ անկախ սեռից եւ տարիքից: Հնարավոր են անհատական պարապմունքներ ըստ ցանկության: Նախատեսվում են նաեւ մարզասարքերի տեղադրում եւ մարմնամարզության պարապմունքներ:

Վիճակում մարտարվեստի տեխնիկան միտում ունի ընդգրկվել ՊԲ ՁԻԼ զորավարժություններում: Առաջիկայում ֆեդերացիան ծրագրում է նախագորակոչային տարիքի մարզիկների հետ վարել ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակներում սառը զենքից պաշտպանվելու եւ այն նպատակային օգտագործելու դասընթաց, կազմակերպել բանակումներ, այդպիսով պատրաստել բանակային կյանքին, ամրացնել հասարակություն-բանակ կապը:

Հովանավորություն ստանալու դեպքում ֆեդերացիայի վեհ ծրագրերը շուտով կիրականանան: Հուսանք, որ շուտով կվերանան ֆինանսական պատնեշները, եւ ֆեդերացիան պատշաճ կշարունակի իր գործունեությունը:

**Սոնյա ԱՎԱԳՅԱՆ**

ՇՈՒՄԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 150

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սի առիթով Թումանյանն ասել է, որ ինքն իրեն արծակազիր չի համարում և որ իրեն ավելի շատ դրամատուրգ է տեսնում, թեպետ այդ ժանրով ստեղծագործություններ չունի: Ըստ էության, դրամատիկական գործ գրելը պարզապես եղել է նրա չիրականացած երազանքը: Գրողի արխիվներում չեն պահպանվել տվյալ ժանրի ձեռագրեր, ուստի դժվար է միանշանակ գնահատել Մեծ Լուռեցու ինքնադրակումը:

Թումանյանի մշակութային ժառանգության մեջ, մանավանդ վաղ ստեղծագործական շրջանում, մենք հանդիպում ենք գրական երկի այնպիսի տեսակների, ինչպիսիք են հեքիաթը, ակնարկը, գրույցը, հուշագրությունը, ֆելիտոնը: Նա անգամ փորձ է արել վեպ գրել, որը չի ավարտել ամենատարբեր պատճառաբանություններով՝ բազմազբաղվածություն, առողջական վիճակ, ժանրային աննախընտրություն և այլն: Թումանյանն առհասարակ չի փայլել շատագրությամբ և իր կենդանության օրոք շուրջ երկու տասնյակ կազմող պատմվածքներն առանձին ժողովածուի տեսքով հանրայնացնելու ձգտում անգամ չի ունեցել:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ էր Թումանյանն ինքն իրեն դրամատուրգ կոչում, մանավանդ որ «չի սահմանազանցել» այդ ժանրի սահմանները: Եթե այս պարագծով զննենք նրա պոեմներն ու պատմվածքները, կնկատենք, որ դրանք ունեն կառուցվածքային ներքին նմանություններ: Խոսքը մասնավորապես «բեմադրական գործողությունների» մասին է: Գրողն ասելիքը ներկայացնում է միզանցեմային դասդասումներով, որն ընթերցողը ոչ թե պարզապես գիտակցորեն կլանում է, այլ նույնիսկ ներկա է գտնվում այդ իրադարձություններին: Թե «Անուշ»-ը և թե «Գիքոր»-ը կազմված են իրավիճակային դեկորներից, որոնցից յուրաքանչյուրը տրամաբանական համատեքստի մի բաղադրիչն է: Փորձենք խորանալ Թումանյանի պատմվածքների սինկրետիզմի մեջ:

«Գիքոր»-ը, բազմադրվագ ստեղծագործություն լինելով, անտեսանելի կապով միացված է տեքստի գաղափարական առանցքին: Համբոյի «տան կռիվը», թիֆլիսյան թանձր առօրյան, հիվանդանոցային սրտածնիլի դրաման ունեն հոգեբանական նույն բնութագրիչները և ստեղծագործական կառույցի էկլետիկ նշանակությամբ ամբողջացնում են միևնույն ողբերգությունը: Ամեն մի տեսարան առանձին արար է, որտեղ հեղինակի ներկայությունը խիստ անկատար է: Հերոսները երկխոսությունների միջոցով ավելի շատ բան են պատմում, քան կա բուն հեղինակային խոսքում: Հեղինակի բառը ստորադասված կայանում է ոչ թե գուտ քերականական մատուցմամբ, այլ բարբառի ճիշտ օգտագործմամբ, որը գրական նյութի համար անհրաժեշտ կոլորիտ է ապահովում, բնականաբար, բարձրացնելով նաև ստեղծագործության գեղագիտական արժեքը:

Թվում է՝ եթե Թումանյանը ժանրային վերափոխման ենթարկեր «Գիքորը», ապա հնարավոր կլիներ դրանից նույնչափ հաջողված դրամատիկական երկ ստանալ: Նկատենք, հետագայում սեփական երկի այսօրինակ վերածնունդ է կատարել նոր սերնդի արծակազիրներից Լևոն Խեչոյանը: Նրա «Սպասում» պիեսը համանուն և «Հայրս» պատմվածքների դրամատուրգիական վերակերտումն է, որով հեղինակը հավելյալ մանրամասներով փորձել է ասելիքը ներկայացնել առավել հուզական-դիդակտիկ միջավայրում, ինչը նրան հաջողվել է:

«Գիքոր»-ն առաջին անգամ տպագրվել է «Հասկեր»-ում՝ 1907 թվականին, բայց այն գրվել էր շուրջ մեկ տասնամյակ

առաջ և պետք է լույս տեսներ «Հորիզոն» հանդեսում, որը, սակայն, չի հրատարակվել: Տարիներ անց տպագրելուց առաջ Թումանյանը վերախմբագրել է «Գիքոր»-ը, բայց թե ինչ էական փոփոխությունների է ենթարկել, դժվար է ասել, քանի որ նրա ձեռագրերը չեն պահպանվել: Արդյո՞ք մեծ գրողն այն դրամատիկական գործի վերածելու նպատակ ունեցել է. մենք կարող ենք ընդամենը ենթադրություններ անել՝ չբացատրելով դրա հավանականությունը:

Պատկերային համակարգը գեղարվեստական ստեղծագործության ատաղձն է, որով էլ գրվածքը տարբերվում է սովորական պատմվածքից: Եթե Թումանյանի պատմվածքներն այս չափանիշով դիտարկենք, գուցե թե գեղծ թվան գեղարվեստական արժանիքներից, որովհետև մակդիրները, համեմատությունները, այլաբանություններն ու խորհրդանիշներն ակնհայտորեն սակավ են: Բայց հանճարեղ լուռեցին գրական երկի գեղագիտական համակարգն ապահովելու իր յուրակերպն ուներ. նա գեղարվեստական պատկերի փոխարեն հանախ օգտագործել է գործողությունների իմաստվորման մեթոդը: Ընթերցողը զգայական ինֆորմացիա ստանում է այդ գործողությունների միջոցով, այլ ոչ թե տեքստային հուշումներով:

Այս առումով բնորոշ է «Գելը» պատմվածքը: Գրվածքը կարելի է համարել նաև նովելաշար. բոլոր 9 մասերն էլ առանձին պատմություններ (արարներ) են, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում նույն հերոսների դերակատարությամբ: Դարձյալ գերակայում են երկխոսությունները՝ ի բացառյալ չորրորդ մասի, որտեղ առավելապես հեղինակային մեկնաբանություններ են գայլի կենդանական-զագանային վարքի մասին:

Եթե պատմվածքի դիտարկարը փոխարինենք բեմով, ապա բոլոր արարների մեջ կտեսնենք նույն գյուղական անպաճույճ կացարանը, թեժացրած հին բուխարին, արտաքնապես իրարից տարբեր, սակայն հոգեաշխարհով նույնական հովիվներին, որոնց կենսափոխությունները խարսխված է մարդկային անմիջականության վրա: Գրվածքի պարզունակ լեզուն բարբառի յուրահատկությամբ չի պայմանավորված: Թումանյանը այս և նյութ պատմվածքներում կարևորել է ոչ թե ժողովրդական խոսվածքը, այլ մտածողության կերպը: Անգամ գրական հայերենով վերաշարադրելու դեպքում, կարծում ենք, կերպարները դարձյալ կմնան նույն պարզամտության սանդղակին:

Սի տիպական մեջբերում հիշյալ պատմվածքից. «Այ տղա, դե էն ա, ոչխարը բերում էի տուն անեն: Բերի գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ ոչխարը դեսուղեն խախալ-խախալ է անում, շունն էլ հա է անում, թե ոչխարի մեջն ընկնի: Հենց էս ժամանակը շները թփի տակիցը մի գիլի վեր կալան ու ետևիցը լարվեցին»: Այստեղ ոչ այնքան բարբառային ոճն է շեշտված, որքան մտածողության ուրույն կերպը: Թումանյանը, լավ ուսումնասիրած լինելով լուռեցու ավանդական բնավորությունը, կարողացել է ստեղծել նրա ճիշտ արքեստիպը: Աշխարհից անգիտակ, սակայն հարուստ կենսափորձով Անդրիաս քեռին, Շոռազյալցի Ավոն և մյուսները բարի ու կուպիտ են իրենց եղենական լեռնաշխարհի մասն: Գրողի մյուս պատմվածքները՝ «Գաբո բիծու շերամապահությունը», «Նեսոյի քարաբաղնիսը», «Քեռի խեչանը», «Երկաթաթուղու շինությունը» և ուրիշներ, նույն այս առանձնահատկությունն ունեն: Դրանք ևս կառուցված են «բեմադրական» հենքի վրա: «Նեսոյի քարաբաղնիս»-ը թերևս կարելի է անվանել մեկ արարով դրամա, որտեղ հեղինակային խոսքն աննշան է, փո-

խարենը շատ են երկխոսությունները:

Այսպես ասած՝ բեմական միջավայրն օդան է, որտեղ հարևաններով հավաքված, չիբուխ են ծխում ու քննարկում Կիրակոսի առողջական վիճակը: Թումանյանը չիբուխ ծխելուն հատուկ փիլիսոփայական իմաստ է տալիս, ընդ որում՝ ծխելով ուղեկցվող գործողություններն առկա են ոչ միայն նրա պատմվածքներում: Ջորջորձակ՝ «Ծանր տրնբալով թեք ընկավ ծերը, /Երկար կոթավոր չիբուխը լըցրեց...»: («Հառաչանք»):

Ուշագրավ է նաև իրոնիկ տոնը, որը կարմիր թելի պես անցնում է ամբողջ ստեղծագործության միջով: Թումանյանը հոգեբանական մեկնություն չի տալիս Նեսոյի պարզամիտ նախածեռնության հետևանքներից, որպեսզի ընթերցողական ընկալումը չմնա հեղինակային ազդեցության շրջանակում, նա գերծ է մնում պարտադրական միջամտությունից ու իր դերակատարության համեստ նշանակությանը դառնում է իրադարձությունների լուռ մասնակիցը: Ընթերցողի մի աչքը հեղինակի վրա է՝ սպասելով իրավաբարության բացատրության, մինչդեռ Թումանյանը նրբանկատորեն այս առաքելությունը վերապահում է Նեսոյին, որի սին ինքնավստահությունը պատճառ է դառնում համագյուղացու մահվան: Եզրահանգումն էլ դարձյալ ոչ հեղինակային է՝ «Տո՛ւ, դե ճակատի գիր ա էլի, հո նրանց էլ Նեսոն չի խեղդել»: Իսկ պատմվածքի վերջում Նեսոյի՝ լուռ նստած չիբուխ ծխելը նման է բեմական վարագույրի: Ամեն ինչ դրանով սաված է, և ենթադրություններն ու գնահատականները թողնվում են հանդիսատեսը ընթերցողին:

Բեմուն (նաև՝ կինոյում) տիպական կերպարներն ընդգծելու համար հաճախ է օգտագործվում բարբառային կամ ժարգոնային լեզուն: Թումանյանի արձակը միմիայն բարբառային բազմօգտագործումներով չի շեշտվում, գրողն իր հերոսներին կերպավորում է ստույգ միջավայրում, որի մեջ նաև ապրվող ժամանակն է ուրվագծվում:

Ամենայն Հայոց բանաստեղծը դասական իմաստով թատերասեր էր ու թատերագետ, նույնիսկ մի անգամ անհաջող փորձ էր արել խաղալ բեմում: Իսկ Թիֆլիսի հայոց թատրոնի բացման առիթով գրել է. «Կցանկանայինք, որ հայ հասարակությունը գնահատեր ու պաշտպաներ իր մայրենի բեմը, իր դրամատուրգներին ու դերասաններին, այսպիսով նրանց հնարավորություն տալով ավելի ուժեղանալու և իրեն համարել իրավունք ձեռք բերել ավելի խստապահանջ լինելու»: Այս խստապահանջությունն էր գուցե նաև պատճառը, որ չէր համարձակվում ձեռք գարկել դրամատուրգիային: Անհնար է, որ գրական անչափելի ծիծրով օժտված Թումանյանը ցանկանար ու չկարողանար գրել դրամատիկական գործեր: Չենք բացառում նաև այդ ժանրով գրված երկերն իր իսկ ձեռքով ոչնչացնելու պարագան, որովհետև նա այդպիսի սովորություն էլ ուներ: Նույնիսկ պատգամներ էր գավակներին, որ եթե հետագայում իր արխիվում անավարտ ստեղծագործություններ գտնեն, ոչնչացնեն ձեռագրերը:

Մեծ բանաստեղծի, մանկագրի, հեքիաթագրի, հրապարակախոսի ու արձակագրի հանճարը, այդուհանդերձ, չի տուժել, որ նա այդպես էլ չի գրել դրամատուրգիական գործեր: Հովհաննես Թումանյանը դարձյալ ու միշտ մնալու է «անհաս Արարատը մեր նոր քերթության»:

**ԿԻՄ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների թեկնածու**

ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՆԿԵՐԾ ՉԵՆՔ

Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահռելի չափերով չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը:

Մեծ ավելոծություններն ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուններից, և ահա-ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են:

Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է: Անշուշտ նա պիտի շարժվեր այնպես, ինչպես ինքն է կամենում, և խոսեր այն, ինչ որ ինքն է մտածում:

Այդպես պիտի լիներ մարդը, առավել ևս այս տեսակ մի ժամանակի առաջ, երբ շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ աներևակայելի է:

Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան:

Եվ հանկարծ... դուք տեսնում եք... Նա խաղ է անում, դերասանություն է անում:

Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են:

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածրն ու կեղծավորները:

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ, և ահա, մեր կյանքը ավելի նման է թատրոնական բեմի, ու այդ բեմը թեև փոքր, բայց, տեսեք, ո՞րքան դերասաններ ունի...

Իրենց վրա առած զանազան դերեր՝ նրանք մտել են ու խաղում են այս կամ այն ասպարեզում:

Ահա սա՛՝ ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը նշանավոր հերոս է խաղում, երրորդը հրապարակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձևանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր, ամենքին մեղադրելու և ամենքից հաշիվ ուզելու...

Ու բնականաբար, չնայելով այսքան շատ գործիչների ներկայությանը, դուք զգվում եք, որ ցուրտ է, որովհետև չկա անկեղծության ջերմությունը, զգացմունքի հուրը, որովհետև նրանք խոսում են լեզվով, իսկ սիրտները շատ է հեռու, և զգվում եք վերջապես:

Սրանք ոչինչ չեն սիրում, այլ ցույց են տալիս, թե սիրում են:

Եվ ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կապելով, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծում նրա վրա ու շինում են իրենց էջը:

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էջը, ու միշտ էլ իր էջն է քշում, թեկուզ աշխարքը քանդվի: Հաճախ սրանց շահատակությունը տևում է շատ երկար, նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել և ով են թանաշավորները կամ երբ են գլխի ընկնելու:

Ու որպեսզի այդ թանաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը:

Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: Ժողովուրդն այդպես է կամենում...

«Ժողովուրդը մեզ հետ է... Ժողովուրդը ձեզ կդատի... Ո՞ր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»

Այդ հերիք չէ դեռ: Ժողովուրդն էլ են կործանում...

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետների իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

- Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկեք ու ջոկեցեք իսկականը կեղծիքից:



ԳԵՂԱԴԻՏԱԿ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՍ, ՀԻՇՈՒՄ Է ՀԱՆԴԻՍԱՍՏԵՍԱԸ (Իմ օրագրից)

1959թ. ԼՂԻՄ կուլտուրայի վարչությունը պատրաստվում էր նշել Մեծ Լոռեցու 90-ամյակը: Ավելի պատշաճ կերպով նշանավորելու համար կազմակերպվեցին միջոցառումներ: Ռադիոյով և «Սովետական Ղարաբաղ» թերթի միջոցով տրվում էին հաղորդումներ, տպագրվում հոդվածներ: Հայտարարվեցին նաև շրջանային ու մարզային թատերական, ասուներ, երգի և այլ ստուգատեսներ: Ստուգատեսին լուրջ պատրաստվում է նաև Թաղավարի ակումբի թատերախումբը:

Ես 10 տարեկան էի: Խեղճ ու ամաչկոտ, լուրջ պահվածքով, խոնարհ ու լռակյաց, վախկոտ դեմքով և միամիտ հայացքով:

Երկի դրանք էին հաշվի առնվել, երբ մի օր ակումբի նորանշանակ վարչուհի երջանկահիշատակ Անյա Շահրամանյանը եկավ դպրոց: Ուսուցչանոցում քննարկելուց հետո դպրոցի տնօրեն ընկ. Մարգարյանի հետ ջոկատավար Ռոզա Շաքարյանի ուղեկցությամբ մտավ դասարան:

- Ահա մեր ընտրյալը,- ասաց ջոկատավարը և բռնելով իմ ձեռքը՝ տարավ գրատախտակի մոտ: Դասուղեկ ընկ. Արմին Թամրազյանի հետ պայմանավորվեցին և ինձ ընտրեցին Գիքորի դերակատար համաճում պիեսում:

Ես ավելի վախեցած նայում էի մեկ ընկ. Թամրազյանին, մեկ ընկ. Մարգարյանին, իսկ Անյա Շահրամանյանը, շոյելով մազերս, ժպտավով ասաց.

- Մի՛ վախեցիր, շուտով դերասան ես դառնալու, շնորհավորում եմ:

Դա եղավ իմ դերասանական ասենթե մշակութային կարիերայի առաջին պահն ու փորձաքննության առաջին քայլը:

Մեծ եռանդով պատրաստվում էինք ստուգատեսին: Առաջին գլխավոր փորձը եղավ աշակերտների համար ցուցադրումը, որին ներկա էին ամբողջ դպրոցի ուսուցչական, աշակերտական, տեխնիկական կոլեկտիվները: Հավանություն տալով ներկայացմանը՝ վերջում շնորհակալական և շնորհավորական խոսք ասաց հայրը լեզվի և գրականության ուսուցիչ ընկ. Վարդան Բաղդասարյանը: Իսկ ուսուցիչ Սուրեն Իսրայելյանը, խոսք խնդրելով, ավելացրեց. «Առաջին քայլը արված է և հաջողված, շուտով հանդես եք գալու հասարակության առաջ և շրջագայելու եք գյուղերով՝ ավելի մեծ փորձ ձեռք բերելու համար: Եկեք մշակութային բարի երթ մարտնչեք նորանշանակ ակումբավարին, նորացված կազմով ինքնագործ թատերախմբին, ցանկանա՞նք նոր բեմական հաջողություններ, բարի երթ, առաջ, ծափողջույններ»:

Հաջորդ օրն ամբողջ դպրոցով մեկ գալիս էին թևանցուկ անում և բարձրացնում. «Գիքոր ջան, Գիքոր»...

Ծիշում ասած, օրը չեմ հիշում, բայց հաստատ գիտեմ, որ հունվար էր: Մասնակցեցին շրջանային փուլին, և ահա, խնդրեմ, հաջողությունը մեզ ժպտաց. իրավունք ստացանք մասնակցել մարզային ստուգատեսին և գրավեցինք պատվավոր առաջին տեղը:

Ահա և Ստեփանակերտում ենք:

Կուլտուրայի վարչության հանձնարարությամբ մեզ տրամադրվեց մի առանձնասենյակ, հատկացվեց 4-5 ժամ՝ պատրաստվելու, մեկ անգամ ևս փորձաշրջանով վերստուգելու մեզ:

Մեզ մոտ եկան բեմի վարպետներ Մամիկոն Միքայելյանն ու Սուրեն Համգոյանը: Նրանք մի շարք խորհուրդներով մեզ օժանդակեցին, ցուցումներ տվեցին և մեզ ուղղակի մղեցին դեպի բեմ:

Երեկոյան կայացավ ներկայացումը: Վա՛, Աստված իմ, հենց հիմա էլ, 50 տարի անց, մտքերս թղթին հանձնելու այս պահին էլ մարմինս սարսուռն է:

Բազազ Արտեմի դերում խաղում էր համագյուղացի Միհանուր Գրիգորյանը, մի մարդ, որի արտաքինը հուշում է, որ դաժան ու կոպիտ, դերակատար է, ճիշտ այնպես, ինչպես պահանջվում է Բազազի դերում: Նա խաղում էր որպես իսկական Բազազ Արտեմ. ոչ մի խղճահարություն, ահապիտու հայացքը շատ բան էր ասում և ի ցույց դնում:

- Բա՛ղ թանկ է, հա՞...- ու հանկարծ լսվեց նրա ուժգին ձայնը և հետևեց հուժկու հարվածը: Հրախլ... Ես գլորվեցի գետնին այնպիսի գլորումով, որ հանդիսատեսին ամբողջությամբ «այխ» բաշելով՝ ոտքի կանգնեց:

Ես իրոք լաց էի լինում, ոչ թե դերակատարումից, այլ ցավից:

Առաջին շարքում նստած էին բեմի վարպետներ Մամիկոն Միքայելյանը, Սուրեն Համգոյանը, Մարգո Բալասանյանը, Ջինավոր

Վերջյանը, ինչպես նաև Կիմ Առաքելյանը, Գուրգեն Գաբրիելյանը (բոլորն էլ այժմ երջանկահիշատակ), բոլորն էլ ժյուրիի կազմում էին:

Թե ինչ տեղի ունեցավ հետո, այնքան էլ կարևոր չէ: Ավարտվեց ներկայացումը, փակվեց վարպետը: Մեր հուշարարը, որ մեծ թույրս էր՝ Արաքսյան, հանկարծ գրկելով ինձ՝ լաց եղավ. «Վերջ», - ասաց:

Բացվեց վարպետը, մեզ նորից բեմ հրավիրեցին և ծափողջույններով բացականչեցին. «Ապրե՛ք, ապրե՛ք, դուք արժանի եք անենաբարձր գնահատականի»:

Հանդիսատեսներից մեկը բարձր ձայնով գոչեց. «Մալադե՛ց Գիքոր»: Իսկ մի կին, բեմ բարձրացավ, գրկեց ինձ ու թե՛

- Ապրե՛ս, բալե՛ս:

Ամփոփելով ստուգատեսի արդյունքները՝ պարզվեց, որ Թաղավարի ակումբին կից թատերախումբը մարզային ստուգատեսում գրավել է առաջին տեղը, և կուլտուրայի մարզային վարչության կողմից պարգևատրվել են պատվոգրով թատերախումբը և առանձին դերակատարներ:

Դա իմ մշակութային գործունեության հիշողության գլխավոր պահեցից է, որ մինչև այսօր հիշում եմ ես, հիշում է հանդիսատեսը:

Տարիներ անց, 1969-ին մասնակցել եմ նաև Հ.Թումանյանի 100-ամյակին կազմակերպված մարզային ստուգատեսին: Այս անգամ արդեն ասումներում էի Սալաթ-Նուրա, Թումանյան, Սևակ: Նորից մրցանակային հորիզոնական:

Իմ խոսքը 50-60 տարիների վաղեմության հիշողություններ են և իրական փաստեր: Այսօր Թումանյանի 150-ամյակն է: Ես ուզում եմ բոլորին՝ նորաթուխ բանաստեղծներին, գրչակից երիտասարդությանը, հայտնի և անհայտ գրախոսներին, մշակույթի մեծ բանակի անդամներին ու սիրահար-ջատագովներին շնորհավորել և միաժամանակ ստեղծագործել թումանյանական ոգով ու ոճով:

Թումանյանը դարձրե՛ք ձեր ստեղծագործական մտքի գրավակարը:

Անձամբ Թումանյանն ինձ համար եղել է ու կա այնպես, ինչպես որ կար. նա հայ գրականության համաստեղության մեջ մի լուսապայծառ-շողողուն աստղ է:


Որպես խորհուրդ նորօրյա ստեղծագործողներին. հավատարիմ մնացե՛ք թումանյանական պատգամին՝ ընթերցե՛ք Նարեկացի ու խորենացի, Բաֆֆի և Լեո, Սևակ ու Շիրազ, Սարոյան ու Կապուտիկյան:

Թումանյանը մեր հայ գրականության ծանրաբաշ շարժիչ ուժն է: Նա ինձ համար նոր հայտնությունների աղբյուր է: Ես նրան համեմատում եմ Սուրբ Աստվածաշնչի հետ. այնքան նոր հայտնություններ են անում...

Թումանյանը իմ երկրային կյանքի անենաբեղուն ուղեկիցն է և կլինի հետայսու:

**Յուրա Բեգլարյան**  
**Թոշակառու ուսուցիչ**  
**Գ. Թաղավար**

«ԱՆՅԱԼԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԻ ԽԱՉՍԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ»



Յուրա Բեգլարյանը մարդ ծնվում է ինչ-որ առաքելությամբ, կայանում յուրովի՝ ծառայելով իր ազգին, ժողովրդին, երբեմն էլ զարմացնում օտարին, գնահատվում ըստ արժանվույն:

Մեր իրականության մեջ կան մարդիկ, որոնք չեն սիրում անպազոռոտ կոչելով ներկայանալ, իրենց մասին բարձրագոչել, բայց և արժանի են մեծ հարգանքի:


Նման անձնավորություն է Այգեստան համայնքի միջնակարգ դպրոցի թոշակառու ուսուցիչ Ալբերտ Սարգսյանը՝

արժանապատիվ, հարգված ու գնահատված մանկավարժը:

Ստեղծագործող անհատի խոսքերը կոչեր են, ճիշտ ապրելու կոչեր: Երբ ծանոթացա «Անցյալի և ներկայի խաչմերուկներում» նրա գրքի բովանդակությանը, ավելացավ իմ սերն ու հարգանքն այն պարզ մարդու նկատմամբ, որն իր սրտի խոսքն է ասում՝ չընկնելով պաճուճապատ բառերի հետևից, չփորձելով զարմացնել ընթերցողին, այլ նրա դատին է հանձնում իր խիերը՝ տուրք չտալով հանգավորումների:

Թեմաները բազմազան են. սեր, ընտանիք, հայրենիք, թանկ հուշեր, Արցախ աշխարհ, մարտնչող զինվորներ, լավ ընկերներ, հրաշալի կերպարներ: Իր հանդիպած ամեն մեկից մի բան է սովորել: Դրա վառ ասպարույցն է «Չիբուխ Ռուբենը» պատմվածքը, որից համ ու հոտ է բուրում, ամեն մի խոսք՝ դաստիարակող և թանկ խորհուրդ: Շատ հետաքրքիր է «Քաղաքական անեկդոտ» պատմվածքը, որի իմաստը հետևյալն է. հաճախ հարցը ֆիզիկապես ուժեղների օգտին չի լուծվում, չնայած միշտ հավատում են իրենց ուժին:

Արձակ ստեղծագործություններից առանձնանում է «Հազար ու մի տեղեկու-



խաղաղության և բարության:

Այս տողերը կարող ենք շահաբան ընտրել Արցախը գովերգող մի շարք գործերի: Այստեղ պարզ երևում է, թե ինչքան հայրենասեր է նախկին ուսուցիչը, որի խորհուրդները սաները կիրառել են կռվի դաշտում ու հասել հաղթանակի:

«Անցյալի և ներկայի խաչմերուկներում» գիրքը թեկուզ հեղինակի միակ ժողովածուն է, սակայն շատ բան է ասում նրա մասին, նրա էության, շնորհների, կյանքի հանդեպ ունեցած լավատեսության, բարին հաղթելու անհրաժեշտության:

Գրքի էջերում մեր դեմ հառնում է սիրահար Ալբերտը, հայրենասեր Ալբերտը, նվիրյալ Ալբերտը:

Ես ուսուցիչն եմ քո

Եվ թե՛ նման շատ-շատերի,

Ես ուսուցիչն եմ քո

Եվ թե՛ նման շատ-շատ ծնողների,

Խորհուրդն իմ՝ սիրե՛ք բոլոր ուսուցիչներին,

Չե՛զ հոգևոր սնունդ տվողներին,

Առանց որի քո և բոլոր մարդկանց կյանքը:

Հավասար է անապատի տատասակներին:

(«Ես ուսուցիչն եմ քո»)

Որտեղի՞ց է սկիզբ առնում հայրենիքը: Այս հարցի պատասխանը ևս ունի Ալբերտ Սարգսյանը: Իմ ընկալմամբ այս երեք սուրբ որակները՝ տուն, հող և ժողովուրդ, համատեղ կոչվում են մեր սուրբ հայրենիք:

Ծառի նման հայրենիքն ունի արմատ, սաղարթ ու բուն:

Չլինելով դրանցից մեկը, հայրենիք չէ՝ մի որբ անուն:

Ալբերտ Սարգսյանը քաջատեղյակ է հայ գրականությանը և իր բանաստեղծություններում հիշատակում է նաև դա:

Կա՛, արդյոք, մի հայ՝ ծանր չլինի Մեծն Թումանյանին,

Նրա փառավոր, ամնոռանալի վսեմ գործերին,

Եվ ամոթ է շատ, որ կյանքի ճամփին Անգիր չիմանանք վե՛հ Թումանյանին:

Գրքում հանդիպում ենք նաև սիրերգության էջերի, որոնք նրա հոգու թրթռումներն են, ելևէջները և հաճե՛լի տպավորություն են թողնում: Նման բանաստեղծություն է «Նվեր ապագա հարսին» չափածո գրվածքը:

Մայր ցամաքը քո ծննդով պիտի որ դառնա այգեստան,

Եվ ամեն որ ուրախ է շատ լավ ծննդով պատմական,

Լեռնաշխարհի դու սիրամարգ, իմ սիրուհի անման,

Ամենուրեք գովքդ կերգեմ, քո նեղությունն անսահման:

Գրքի ամբողջական գաղափարն ընկալելու համար անհրաժեշտ է պարզապես այն կարդալ, և խորհուրդ կտան չզլանալ ու ընթերցել մի մարդու ստեղծագործություն, որը հասարակ ու պարզ է, բայց ո՛չ պարզունակ, միաժամանակ խոսքային ու իրաշալի գաղափարներով լեցուն: Որպես ամփոփում՝ կուզե՛ի մեջբերել հետևյալ տողերը, որոնք շատ բան են ասում հեղինակի մասին.

**Բալեքիս**

Եթե դուք չեք արտասանում, Կարտասանե՛մ ձեր փոխարեն, Թե աշխատել դուք չեք ուզում, Ես կաշխատեմ ձեր փոխարեն, Եթե դուք չեք ուզում երգել, Ես կերգեմ ձեր փոխարեն, Եթե դուք չեք ուզում սիրել, Ես կսիրեմ ձեր փոխարեն: Ապա ինչպե՛ս ես ինձ սիրեմ ձեր փոխարեն:

**Անահիտ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆ**  
**ԽՄԲԱԳԻՐ**  
**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3100: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 18.02.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: